

«DROSCHAK»

REVUE MENSUELLE

organe

de la F. R. A. D.

# ԴՐՈՇԱԿ

№ 3 MARS

1926

PARIS (France)

## «ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԵԱՆ ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

### ՎԱՂՈՒԱՆ ՄՂՁԱՒԱՆՁՐ

Քուճանդակ Անգրիոլիասի և մասնաւորապէս Հաւաստանի մէջ կատարուած ընդհանուր ձերբակալութիւնները, որոնց առաջին լուրերը Հասան Փետրուարին միայն, խորապէս յագած են Հանրապետական կարծիքը:

Երեւոյթը վրդովիչ է մոնարանդ անոր համար որ, խորհրդային մասուր, միշտ շռայլաբան և աղօթական, խոր լուսիւն կը պահէ այս խոշոր դէպքին մասին, Մոսկուայէն մինչև Երևան: Իսկ արտասահմանութիւն սեպտեմբերի ուրանալ իրողութիւնը, կամ առնուազն վերլուար շրջի դեպքերու պատմութիւնը: Եւ յոն աւելին, անոնք տե՛րա ունեցան զուարթանալով ճիշդ այդ օրերուն, եթէ ոչ Մարդանաբար լեան խնջոյցներ սարքելու, հօփի առաքելութեան և կամ նման պատրուակներով Ձե՛ս օտ մտկոյեան արշաւանքին ատեն ալ, Ռուսիոյ մէջ թափար խաները հոյսատակներ կը դնէին գրգռու գլուխներուն և անոնց վրայ թաղծած, զինարբուքներ կը կատարէին, անհոգ և անպակաս:

Այդ լուսիւնն ու թեթևութիւնը ոչինչ կը փոխեն դժբախտ կացութիւնէն և ոչինչ կ'աւելցնեն խորհրդային իշխանութեան վարկին վրայ: Իրողութիւնը կայ և կը մնայ, Հաստատուած բազմազան աղբիւրներէ, մերկ և պերճախօս: Մէկ աղբանշանի վրայ, բանտարկուած և արտորուած են Հարիւրաւոր մարտիկ միայն Հայաստանի մէջ: Շատերուն վիճակը յուսահատական է. գնդակահարման լուրեր ալ չընան կ'ընէին, այս տողերը շարուած ատեն: Չկայ գիւղ որ իր սև օրը չկայ: Ձեկան խտրը չէ դրած Ե՛ջ զասակարգի, ո՛չ դաւանանքի՝ ո՛չ ալ տարիքի: Եւ գործողութիւնը կատարուած է սովորական վայրնութեամբ, ճիշդ ինչպէս Հայաստանի պոլշեիկեան իշխանութեան առաջին օրերուն:

Կա՛ն արգարացուցիչ պատճառներ այս ընդհանրական, հրեշտային արարքին համար: Ո՛չ և ոչ, Հաստանի մէջ չէ պատահած ո՛ր և է դէպք, որ տեղի տար ամենափոքր պատրուակի Չկայ դաւադրութեան հետքն իսկ: Ձերբակալութիւնները եղած են յանկարծական և ստեփան: Պոլշեիկները այնքան վարպետ են արժուկ յարուցանելու արհեստին մէջ, որ եթէ ո՛ր և է դաւադրութեան հոտ առնէին, աշխարհ պիտի դրդացնէին իրենց բաղձալեզու հրատարակութիւններով, ու՛ր տալու համար ահ ու սարսափի քաղաքականութեան: Ձունին այդպիսի փաստ, բայց ունին կարողութիւն՝ «գործեր» սարքելու:

Վերջերս բուն վիճաբանութիւններ կատարուած են Անգրիոլիասի պոլշեիկեան ժողովներուն մէջ, Ձեկան պահելու կամ ջնջելու մասին: Առաջարկելի բռն Մոսկուայէն: Կը թուի թէ չեկիստի Հոգեբանութիւնը շատ աւելի գորաւոր է ծայրագուստներուն, քան կեդրոնին մէջ: Կամ աւելի ճիշտ, ծայրագուստները միշտ հրաբուխի վրայ կը զղան իրենք զիրենք, չեն կրնար Հանդիսարուն քաշել՝ առանց վառօղբ չոր և սուխները սուր պահելու: Եւ կը վերահաստատուի Ձեկան, իր բուն լուր լիազօրութիւններով: Թաղմանակը տարուած էր: Քուէարկութեան ջնջող օրն իսկ, «Արտակարգ Թանձնաժողովը», ինչպէս կը կոչեն, կը ձեռնարկէ բեղնաւորը աշխատանքի մը, կը ձերբակալէ ու կը բանտարկէ առանց Համրանքի, գործ, արդիւնք ցուցնելու նախանձանիւրութեամբ: Այդպէս էր և՛ երէկ, երբ սանձախտորոմոյեղնութեամբ կը գործէր ցարական ժխրաւանա՛ն: Եւ պարագ ստեղ չէ որ պոլշեիկները առաջին օրէն իսկ ասպարէզ քաշեցին այդ ճիւղին մէջ Հաստեցած հրեշները, առանց ազդի խտրութեան:

Աղբանշանը տալէ յետոյ, դիւրին էր երևոյթները փրկել: Ազուլութեան աւելի կրնար դառնալ Խորհուրդներու ընտրութիւնը, որ միեւնոյն ատեն կը կատարուէր երեք Հանրապետութեանց մէջ: Մոսկուա վերջերս շարք մը զիջումներ բրաւ, սիրաշահելու համար գիւղացիները, որոնք հակապոլշեիկ, առնուազն անկուսակցական են ջարջախիչ մեծամասնութեամբ, յատկապէս մը ընդլայնեց ընտրական ազատութիւնը, և

պայճան զբառ որ անվաւեր Հոգևորի ո՛ր և է ընտրութիւն, եթէ սնոր չեն մասնակցած բուէարկուներու 35 % ր:

Այս զիւրծը կ'ըլլար վերջ աւուր Համար գիւղացիներու ձեռնպահութեան: Բայց նոր կարգադրութիւնը իր Հետ բերու ուրիշ մտահոգութիւններ: Երեսան եկաւ որ անկուսակցականները եռանդով կը մասնակցին ընտրութիւններուն, թէ՛ իբրեւ բուէարկու և թէ՛ իբրեւ թեկնածու: Այս պատճառով յարձար դատեցին յետաձգել ընտրութիւնները՝ կարգ մը շրջաններու մէջ, Բայց ամէն բանէ առաջ, զարկ տուին Հին սովորութեան մը, — ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ ընտրողները շատ ազատ չկարենան շարժիլ, և, քաղաքացիական պարտականութիւնը ստորադասն ընպէի պահանջին, խոհեմութեան և խաղաղութեան:

Ապահովաբար, այդպէս ալ եղած է Անդրկովկասի մէջ: Ազատութենէ զրկելով, արգելափակելով կամ ցերեցան ընելով անբողձալի տարրեր, անհասկամ բազմութիւն, ճամբան կը Հարթուէր «բարեյոյս» ներու առջև: Մինչև անգամ այդ պայճաններուն մէջ կատարուած ընտրութիւնները աննպաստ են օրուան իշխանութեան: Առհասարակ, ընտրողներուն և թեկնածուներուն մէջ մեծամասնութիւն կը կազմեն անկուսակցականները, նոյն ինքն խորհրդային թերթերու վկայութեամբ:

Բայց, աւելորդ յղմութիւն է պատճառներ փշտուել, երբ մէջտեղ է Հիմնական շարժառիթը — ՎՅՂՈՒՄՆ ՄՂՁՄԻՄՆՁԸ: Բոլոր տեսակի բռնակալութեանց Համար ալ, այլ է եղած ահարկման ձղիչ ուժը: Զուեկնալով պատուանդան բուն ժողովուրդին մէջ, վարժուած՝ միշտ պատենշին վրայ, գրահաստ բռնացքով իշխելու, անոնք ունին մէկ ապաւեն, — Համատարած սարսափը: Եւ կը դիմեն անոր, ամէն օր և ամէն ժամ, զգոյշ կամ լսելու, Համաձայն պարագաներուն: Փայլուն է խորհրդային իշխանութեան տիտղոսը — բանուորա-գիւղացիական. բայց, սոսկ անունը չի կրնար ժողովրդական իշխանութեան վերածել դասն «օլիկարշի» մը, որ իր նմանը չունի ազգերու պատմութեան մէջ: Ինչպէս դասական բռնաւորները, այդ իշխանութիւնն ալ ամէն բանէ առաջ կը փոխնայ Համը ու Համբերատար գանգուածէն, — ժողովուրդէն:

Երկիւղի ամէնէն տարրական փաստը այն է որ, պոլշեկիները իրենց միահեծան ղեկատարութենէն ութ ասպի վերջն ալ, ժողովուրդը զրկուած կը պահեն իր քաղաքացիական իրաւունքներէն, խօսքի, մասնուի, ընկերակցութեան սպասուութենէն: Ուրիշ փաստ

մըն է՝ օստիկանական-լրեսական կազմակերպութեան քստմեկի ցանցը, որ կը զերագանցէ և՛ ցարականը և՛ թրքականը: Իսկ այս բոլորին թաղուպակը՝ Հոգևոր Զեկան (Զրեզվիչպա), որ անունը փոխեց կեղերուն մէջ և կոչուեցաւ «Քաղաքական Վարչութիւն» (Պրամը Սիասի), պահելով, սակաչն, իր ստորոգելիներուն մեծ մասը:

Այս բոլորը կ'օգնէն խափանելու գալիքը: Ընդհակառակն: Ընդնք սահմանուած են աւելի լայն փորելու Հիմքերը, փութայնելու վախճանը:

Իրուած է որ, բոլոր բռնակալութեանց ատեն ալ, միահեծան վարիչները իրենց զիրենք անասուհով, տկար զգացած են իրենց ուժի և փառքի զազախակէտին, և սաստկացուցած են սարսափը: Սակաչն չէ ուշացած փրկուածը, զրգազրկն և անդարձ: Ուրքան ամուր փակած են եռացող կաթսալին կափուրիչը, այնքան արագ և ուժգին եղած է պայթումը: Ծակատագրական է այս ելքը և՛ պոլշեկիներուն Համար, որոնք լու սերտած են ժողովուրդներու քաղաքական-գասակարգային պատմութիւնը, բայց կը մնան նոյնքան միակողմանի և կարճատես, որքան բոլոր բռնաւորները: Ամէն զնով տիրելու, իշխելու կիրքը արտ մըն է, որ վարագոյր կը քաշէ աչքերուն, խաթարելէ յետոյ միտքը:

Այլ արտատուր, կացութիւնը կը մատենն այսօրուան պոլշեկիները բանու և զործով: Հակառակ իրենց շունչալից Հասաստիչներուն, անոնք չեն կրնար բաժնուիլ արտասովոր, պատերազմական վիճակի մեթոտներէն, և աջ ու ձախ կը շաչեցնեն մտրակը, քանի տէր ու տիրական են: Սեփական ծորթի պահպանումը կը գերակշռէ ուրիշ ամէն մտահոգութեան վրայ: Վաղուան ծղձաւանջը կը բազմապատկէ բռնութեան և խելագարութեան թափը, և ջղաձգութիւննոր կատարել կուտայ որոնք շատ պերճախօս են:

Սիւլիբիաներն ու կախարաններն էին որ զարգացուցին առասական յիլափոխութիւնը, և լանդեցան որոշ Հանգրուանի մը: Նոյնը կը սպառնայ պոլշեկիներուն, որոնք շրջեցին յերափոխութեան բնական ընթացքը, և այժմ կը գալարտին խաբուութեան և մասկալութեան, կիրքի և կոսակաժի լարիլընթոտի մը մէջ:

Փրկարար է այդ գալարումը: Զահր շատ կ'ըլլան, ի Հարկէ, բայց ո՛ր ազատամարտը իրականացած է առնոց երկուների:

# ՏԱՇԻՐԻ ԳԱՒԱՌԻՆ Բ Ռ Ն Ա Գ Ր Ա Ի Ո Ւ Մ Ը

Տաշիրը.—անուն մը որ այժմ չի գործածուիր— մեր Հին Գուգորքի մէկ գաւառն է, որ յետոյ Լոռի կըչեցաւ, Լոռիի բերդին անունով և Հինա ծանօթ է իբրև Բորչալու:

Հայաստանի այդ Հիւսիսային գաւառը երբեմն առանձին Հայկական Թագաւորութիւն է ունեցած. բայց ընդհանրապէս եղած է Հիւսիսային քրէշխութեան մէկ մասը և Հայաստանի պաշտպանը ընդդէմ «Հիւսիսականաց»:

Մեզ շատ Հետուն պիտի տանէր, եթէ պատմէիք Տաշիրի փառաւոր անցեալը: Անոր պատմութիւնն այնքան ճոխ է ու բարձրագին, և այնքան շարժական չէ Հայաստանի ընդհանուր պատմութեան Հետ, որ սկիւի ունցեալն՝ կը նշանակէ Մամիկոնեանց, Գուգարաց, Բագրատունեաց տոհմերու պատմութիւնը ամփոփել:

Տաշիրի գաւառը պատմականօրէն բնորոշելու Համար, կրնանք աւանց շափազանցութեան բազմաթիւ զայն Տարօնի Հետ: Եթէ Տարօնը տեղաւորած է Տարուսի մէջտեղը, Ստաւնի լեռներուն և Մուշի դաշտերուն մէջ, Տաշիրը նըստած է Փոքր Կովկասին մէջտեղը՝ Լոռիի լեռներուն և Բորչալուի մեծ դաշտին մէջ: Եթէ Տարօնը Հարաւի Թշնամիներուն դէմ կանգնած է, Տաշիրն ալ Հիւսիսականաց դէմ ծառայած է: Եթէ Հոն Մուշեղ, Վասակ Մամիկոնեանները ծնած են, Հոս ալ ՎաՀան Մամիկոնեանեցիք թէ աւած են: Եթէ Տարօնի մէջ Ս. Սահակները երգած են Հայոց Հոգեկան կեանքը, այստեղ ալ ՕՀան Օձնեցիները նոյն դերը կատարած են: Եթէ Մուշի Ս. Կարապետի փանջ Հայկական կիբոն էր դորձած, Տաշիրի մէջ անոր դերը կը կատարէին Հազրատն ու Սանահինը:

Այսօր Տաշիրի շքու գաւառներէն երեքը կը գտնուին Վրաց սահմանին մէջ և միայն մէկ գաւառակը, Զայու Օղու (այժմ Ստեփանաւան), կցւած է Հայաստանի: Ինչո՞ւ այս անշարունակը:

Ինչպէս դիտելու տւած ենք նախորդ յօդուածներով, պատերազմէն առաջ ուսու կայսրութիւնը իր վարչական բաժանումները շէր վարել ոչ պատմական, ոչ ազգագրական և ոչ ալ անասական ու աշխարհագրական պայմաններով, այլ աւելի Հակակշռելու քաղաքականութեանը և պատահական տրամադրութիւններով: Այդ նկատմամբ ալ, Բորչալուի գաւառը կը կազմէ նախին Տաշիրի գաւառէն և կը միացնէ Թիֆլիսի նահանգին: Մամեանց 1908-ի յեղափոխութենէ յետոյ, երբ Անդրկովկասեան ժողովուրդները դեմակցութեան գալով ինքնավարութեան (դեմսոպօ) խնդրը կը դնէին, Հայերն ալ Բորչալուն Թիֆլիզէն միացնելը անբռնական զբաղանջով, առաջարկեցին Բորչալուն բաժնել Թիֆլիզէն և միացնել Ալեքսանդրապոլի նոր կազմելիք նահանգին, որու բնական բաղկացուցիչ մասը կը համարէին աշխարհագրականօրէն: Այս պատմականօրէն, ազգագրական և սքիշ տեսակետէն. բայց Այդ ձգտումին դեմ չէին և վրաց ղեկավար մենշեւիկները և ուսու կառավարութիւնը: 1917-ին սահմանային փոփոխման ծրագիրը ընդունեցաւ Կերենսկիի կառավարութեան

կողմէ, որուն կը ծանակցէին վրացի մենշեւիկ Մերեթիլի, Չիտնիկիլի և այլն: 1918-ին, երբ ստեղծեցան անկախ Վրաստանը և Հայաստանը և Թուրքերը ծանր կացութեան մտանք էին մեզ՝ առնելով Կարսը, Ալեքսանդրապոլը, Լարսքիլուէ-Գիլջանի ճանապարհը և Թիգրանի կողմէն գետեղեր էին Երեւանի դիմաց ու ամէն վայրկեան կը սպառնային ընտրելի Հայութեան և Հայաստանի վերջին Մնացորդը. վրացական զորքերը կը ծաննէ Տաշիրը և Զաւախը և կատարուած իրազեկութեան առաջ կը դնեն Հայաստանը՝ գրաւելով այդ գաւառները: Թուրքերու գրաւման Հետեւանցով, անՀնար էր պաշտպանել այդ Հողերը: Վրաստան օգտուելով առիթէն, սկսաւ բռնութիւններ կատարել իր գրաւած գաւառներուն մէջ: Տեղական ժողովրդին ատելութիւնը սաստկանալով, յանդիպելու Լոռի գաւառին պատմութեան, որ պայթեցաւ Թուրքերու Ալեքսանդրապոլի շրջանէն բաշխելու օրերուն: Ապրտամբութիւնը ծաւալեցաւ ամբողջ Տաշիրի գաւառին մէջ. Հայկական փոքրաթիւ զօրքերը Հասան օգնութեան. Վրացիները պարտեցան և բազմաթիւ զերիներ ու մեծաքանակ սպանակներ ներթրեցին Հետացան Անդրկովկասի ու իջնամասութեանը ղեկավարը կընտրեց, որպէսզի բարեկամութեամբ լուծուէր վիճելի խնդիրը: Սկսան 1918-ի բանակցութիւններ, որոնք ո՛ր և է գրական արդիւնք չտուին: Բաշխելիները Հասանիով տրեցին թէ Հայաստանի և թէ Վրաստանի, բայց Տաշիրի վիճելի խնդիրը ձգեցին այնտեղ ուր մնացած էր Հայաստանի դաշնակցական և Վրաստանի մենշեւիկ կառավարութեան ատեն: Բաշխելիները առին Հայաստանին այն, ինչ որ Դաշնակցականները զենքով ետ առնել էին Վրաստանէն և միայն մէկ-երկու զիւրաբանք, որ չէզոք զօրի կը կազմէին Ալլահօվալուի շրջանին մէջ՝ միացուցին Հայաստանի. իսկ Վրացիներուն Թաղուցին Տաշիրի երեք գաւառակները, որ զեռ չէին ամբացած Հայկական զօրքերը:

Ուրեմն, այսօր ալ Տաշիրի խնդիրը կը Մնայ անլոյծ Հայաստանի և Վրաստանի միջև և Հայ-վրացական շարքերութիւնները կը գտնուին նոյն անբաժանի վիճակին մէջ ինչ որ Հինգ տարի առաջ:

Համառօտօտիկ ներկայացնելք Տաշիրի աշխարհագրական դիրքը:

Տաշիրի սահմանը կը կազմեն արեւմուտքէն՝ Ախալքալակը, Հարաւէն՝ Երիւսի ու Փոմքալը, արեւելքէն՝ Հին Զարաթի (ներկայ Գիլջան) գաւառները, Հիւսիսէն՝ Թիֆլիզի գաւառը: Ուրիշ իսոքով՝ երեք կողմը Հայկական գաւառներ են, իսկ միայն Հիւսիսը Վրաստանի սահմանին է կցուած: Գուառը ամբողջութեամբ կ'իջնայ Փոքր Կովկասի վրայ, զրեթէ մէջտեղը և նայն դիրքն ունի ինչ որ Գիլջանի գաւառը, այսինքն անոր պէս կը նայն զէպի մեծ Կովկասը, զէպի Հիւսիս, և իր բոլոր ջուրերը կը հոսին զէպի Հիւսիս՝ Կուր գետը: Այդ երկիրը լեռներու, անդունդներու ամբողջ Հիւսուտք մըն է, որ մէկ-երկու վայրերու մէջ միայն փոքրիկ լեռնաբաշխարի կը կազմէ, իսկ ընդհանրապէս ամենհիւ ձորերու, քարձր կատարներու քառա մը ներկայացնելով Հանգիւր, ընդհանուր դիմ մը կը պահէ և զէպի Հիւսիս կը խնամարհի և հասնելով Երազ գետին, դաշտ մը կը ձեւացնէ և այնտեղ կը վերջանայ: Այդտեղ ալ կը վերջանայ Հայաստանը:

տանը: Այս կէտէն ծնունդ կ'առնեն նոր կլինայ և երկու նոր տեսարան: Այն ճառը որ զեպի արեւելք կ'երթայ, դաշտային է, տաքու չար և բնակիչները Քաթարներ են. իսկ այն ճառը, որ զեպի Հիւսիս կ'երթայ, կը բարձրանան թառուս Քրիպէթի լեռները. կլինան խոնաւ է. բնակչութիւնը՝ վրացի: Ուրեմն Տաշիր գաւառը իր երեք կողմերէն թէ և շրջապատուած է Հայաստանի, բայց իր շրջորդ կողմով փաստօրէն սահման կը կազմէ երկու տարբեր կլիմաներու, երկու տարբեր ժողովուրդներու և երկու տարբեր պետութեանց — Վրաստանի և Արդեշյանի: Աշխարհագրականօրէն գոտար չէ որոշիլ թէ ուր կը սկսի և ո՛ր կը վերջանայ Տաշիրի գաւառը. բնութիւնը բացորոտայէտ ճշտած է սահմանները: Երեք կողմերէն կը բարձրանան Հայկական լեռնաշղթաներ և ծնունդ կուտան երկու մեծ գետերու՝ Դեբէտին (Ջորգեա) և Խրամին: Առաջինը կ'երթայ Հարաւէն Հիւսիս, երկրորդը՝ արեւմուտքէն արեւելք, և իրպուտ Հետ եւանկիւն ձը կը կազմեն, որու մէջ ինկած տարածութիւնն է Տաշիրի գաւառը, քիչօտուած խոր անդունդներով և բազմաթիւ գետակներով: Եթէ Դեբէտ գետը իր բոլոր գետակներով կը բխի Հայկական լեռներէն, Խրամ գետը, որ արեւմուտքէն արեւելք կ'երթայ, նոյն Հարազատ ծագումը չունի. իր աջ կողմէն եկած գետակները Հայկական բարձրաւանդակէն կուգան, իսկ ձախ կողմէն եկածները բոլորն ալ վրացական՝ Քրիպէթի լեռներէն: Այս խառնածին գետը աջ կողմով Հայկական է, իսկ ձախով՝ վրացական, և ճիշդ սահմանը կը կազմէ Վրաստանի և Հայաստանի: Խրամի սկունքէն մինչեւ Գուրը թափելու վայրը գրեթէ զուգահեռաբար կը ձգուին երկու շղթաներ, — Հարաւէն՝ Փոքր Գովկասը, Բզովտայէն ցամախով, ինչեւով կը հասնոյր և կը վերջանայ Թրամի աջ ափը. իսկ ձախ ափէն կը սկսին Քրիպէթի լեռնաշղթային ոտքերը, որոնք բարձրանալով, կը հասնին Քիֆլիզի և Գորիի սահմանները: Այս երկու զուգահեռ շղթաները տարբեր են թէ բնութեամբ, թէ բուսականութեամբ և թէ ազգանկութեամբ:

Բնական այդ սահմանաւորումն է եղած պատճառը, որ Հին ժամանակներէ, նոյն իսկ վրաց պատմագիրներու վկայութեամբ, Խրամն էր եղած սահմանը Հայաստանի և Վրաստանի, Տաշիրի և Քիֆլիզի (Վախուշտիի աշխարհագրութեան, Brosset, «Description» Géorgie au s. du Kour): Բայց աշխարհագրական ամբողջութիւնը նկատի չէ անուանած ոչ ցարքերու կառավարութեան և ոչ ալ այժմ բոլշեակիներու կողմէ: Ծարական կառավարութիւնը ձեռնարկած էր անբնական գործողութեան մը, Քիֆլիզի գաւառի Հիւսիսային մասերէն բանի մը կտորներ միացնելով Տաշիրին: Այդպիսով Քրիպէթի լեռներէն կտոր մը, և Քրիպէթի տարածութեամբ գաւառներու և ձախ մըն Գարսեակի գաղտնէն Գուրի աջ ափէն անբնականօրէն միացան և Բորչալուն ընդարձակուած է ի հաշիւ Քիֆլիզի գաւառին: Երբ ցարական իշխանութիւնը Հեռացաւ և մենշեակիները եկան, անոնք առաջագրեցին մինչև Բզովտայ Վրաստանին միացնել: Այդ ձգտումը ճիշտ էր աշխարհագրականօրէն, բանի որ կ'ուզէին միացնել աշխարհագրական ամբողջութիւն մը, հասնելով Փոքր Գովկասի կատարները: Բայց այդ ձգտումը խափանուեցաւ Հայկական զօրքի և Հայ ժողովուրդի կամքով: Իսկ երբ բոլ-

շեակիները եկան, անոնք ալ ինկան ցարական կառավարութեան միւս ծայրայեղութեան մէջ. Դեբէտի ափունքները սուրին Հայաստանին, ամբողջ Խրամի Հովիտը սուրին Վրաստանին, այսինքն Փոքր Գովկասէն Հովհարի նման զեպի Խրամ ձգուած բազմաթիւ Հովիտները կիսեցին խաչածն. Հովիտներու Հիւսիսի մասը թողին Վրացիներուն, Հարաւի մասը՝ Հայոց: Այս աւելի քան անբնական բաժանումով, ոչ միայն աշխարհագրական ամբողջութիւնը խաթարուեցաւ, այլ և մէկ Հովիտէն միւսի Հետ կապը խիստ դժուարացաւ և տնտեսական, ազգագրական ամբողջութիւնն ալ անբնականօրէն կրտսեցաւ, բայցայուեցաւ: Բայց ի՞նչ էր նպատակը այս անբնական բաժանման: Ինչո՞ւ վրացի մենշեակիները կը ձգտէին զեպի Բզովտայ և կէս Խամբան ստիպուեցան կանգնել, ինչո՞ւ անոնց յաջորդող բոլշեակիները նորէն կանգ առին կէս Խամբան և աչքերը յառած են նորէն Բզովտայ:

Վրաստանը իր կազմաւորման առաջին օրէն իսկ, սկսաւ ճանաւարու աշարուութիւն դարձնել զեպի Օսեթիա և զեպի Տաշիր: Առաջին ակնարկով տարբերնակ կը թուի այս պարագան: Պարզին պատճառը. — Վրաստան կլինիցաւ մեծ և փոքր Գովկասներու միջին տարածութեան վրայ: այդ մեծ Հիւսիսային Գովկասին լեռնաշղթաները կը փակեն Վրաստանի ճամբան Հիւսիսէն և Հարաւէն: Մեծ Գովկասը մէկ անցք ունի զեպի Վաղիկավկազ, ուր կը բնակին Օսերը. իսկ Փոքր Գովկասը նոյնպէս մէկ անցք ունի զեպի Հարաւ՝ Դեբէտի Հովիտով: Ուրեմն իր Հիւսիսային դուռը — զեպի Ռուսաստան — Օսեթիան է, Հարաւային՝ դուռն ալ՝ զեպի Հայաստան՝ կը ներկայացնէ Տաշիրի գաւառը: Այս դուռները գրասելու բուռն տենչով էր որ մենշեակի կառավարութիւնը մէկ կողմէն կը ռճբակոծէր Օսեթիան, միւս կողմէ օդանաւերով, զրահապատն: իրով կը ռճբակոծէր Դաղէթէն մինչեւ Մուլաւէր, Ուզունլար, Տաշիրի կարեւոր կեդրոնները: Բոլշեակիները գրաւելու մեթոդը փոխեցին. Օրծօնիկիմէնները իմաստօրէն օգտագործեցին Հայաստանի մեղիութիւնը և անոր ղեկավարներուն միաձուրթութիւնը և «եղբայրութեամբ» հաստատուեցան երկու կարեւոր դուռներուն վրայ: Ներքին Օսեթիան որոշ ինքնավարութիւն ստացաւ, և դուռեցաւ Վրաստանի իշխանութեան տակ: վերին Օսեթիան մինչեւ Ինգուշէթիա, մինչեւ Վատիկավկազ բանակցութիւններով կը ջանայ միացնել Վրաստանին. իսկ Հարաւէն Տաշիրի գաւառի բոլոր անցքերու գլուխը, Մական Մուլաւէրը, Օպուէթի եւ այլ շղթաները միացուած են, Հայաստանի ձգնով միայն Ղուլայ Օղլուի շրջանը: Ուրիշ խօսքով թէ Հիւսիսային Գովկասի եւ թէ Հայաստանի դուռներուն տիրապետած են Վրացիները:

Փողոնք Օսեթիան և խափնը Տաշիրի մասին:

Ինչպէս ըսի վերը, միակ դուռը, որ Հայաստանը երկաթուղով կը կապէ Վրաստանի, Ռուսաստանի, Արդեշյանի Հետ, Հիւսիսի կողմէն է, — Տաշիրի գաւառը, որ ճամբայ կը բանայ Խրամի աջ ափէն զեպի Արդեշյան-Գանձակի շղթաները և այստեղէն Բագու-Ռուսաստան. իսկ Հիւսիսի կողմէն զեպի Վրաստան և Հիւսիսային Գովկաս: Վրաստանի դրաման աակ, Խրամի աջ ափը Հետեւեալ պատկերը կը ներկայացնէ. —

գրուի բանուկ ճանապարհներով Արբելչյանի, Բագրուի, Ռուստոսանի Հետ, Հետեւաբար իր կապը պիտի պահէ Քիֆ. լիդի վրայով և ընդմիջող Վրաստանը պիտի դառնայ Արբելչյանի, Ռուստոսանի եւ, Հայաստանի միջեւ փոխանցման, «արանդիտ»ի շրջանի մը: Այդ Համդաճանը երկու առասելուքի են կուտայ անոր — Բագրուական և ք. Տիտեսական: Բագրուական այն մտքով, որ Հայաստանը չի կրնար անին ջակատարէն կապուի Ռուսիոյ և Արբելչյանի Հետ, և Հետեւաբար Հայաստանի քայլերը միշտ Վրաստանի Հակառակն են թակալ պիտի ըլլան, իսկ տնտեսական կողմէն Հայաստանը բացարձակօրէն կախուած պիտի ունենայ Վրաստանի բարեացակամութենէն:

Ատէ՛ք զատ Վրաստանը պիտի դառնայ մեծ Կանթոն վրայ նստած Հարկահաւաք մը: Այսօր իսկ, երբ Անդրկովկասը դաշնակցութիւն է, Վրաստանը փութի վրայ աւարք կը դանձէ Հայաստանէն, այդ միակ ճանքով կատարուած արտածուաններուն և ներածուաններուն Համար: Այդ վիճակը միւսին կուտան Վրաստանի արտադրանքները մը, զայն կը դարձնէ թեւազորը անպրկովկասեան ժողովուրդներու քաղաքական և տնտեսական անկախութեան: Եւ իսկապէս, այսօր Վրաստանի կամքն է որ կ'ըշխէ Անդրկովկասի մէջ:

Ս Եթէ քաղաքի արտածութիւն մը — Լամբարո — Հայաստանի ուսումնական միջնէ Իրան, ընդամենը 15 վերստ — միացաւ Հայաստանի, և Իրանը զանայն Հայկական սահմանը, այդ դեռաբարութիւններն անորջ պիտի վերանան, Այնքան անհրաժեշտ-Մտտովյունէն երկաթուղիները եթէ ձգուի դաշնութեամբ միջնէն: Արբելչյանի սահմանը, Արբելչյանը և Հայաստանը իրենց տնտեսական, քաղաքական անկախութիւնը կը ստանան և կ'ազատին Վրաստանի միջնորդի դերէն և Հարկատուութենէն:

Վրաստան ամօր կտուցած է Տաշիրի գաւառէն քահալուրիշ պատճառով: Իր մեծըը պահելով Իրանի աջ ափը, անորացուցած կ'ըլլայ Սխալբալակի բռնադատուած և վտանգած Գուգարքի միւս գաւառները: — Հին Ջորգիօրը, արդի Դիլիջանը իբրեւ դժակ մը կախուած կը մնայ Արբելչյանի և Վրաստանի միջեւ: Մէկ դանակով երկուքէն մէկը կրնայ դիւրութեամբ կտրել Հայաստանի այդ թանկագին գաւառը: Իսկ աւելի Հեռուն, դեպի Հարաւ, դեպի Այնթապի քաղաքները կը բացուին Վրաստանի աւելի և յարմար առանիս, երբ որ ուզեն կրնան առանց արգելքի մտնել Հայկական բարձրաւանդակի սիրաբը: Լինա այս ուղիովան գերակշռութիւնը նախատեսելով է, որ Վրոյնիները կը ձգտին Բովտայ Հասնի:

Կարելի չէ ըսել թէ Վրաստանը Տաշիրը գրաւած է Հողային և ալ Հարստութիւններէ շլացած: Աւելի շատ Տաշիրի Հարդրակցական միջոցները շահագործելու տեսակէտն է, որ վճարական պիտի կատարեն այս բռնադատուած մէջ: Տաշիրի գաւառը Վրաստանի Համար դարձնել է դիւրին եկամտուտի աղբիւր մը: Բայց նոյն տնտեսական շահագործութիւններն ունի և Հայաստանը: ան ալ կ'ուզէ օգտուիլ Տաշիրի Հարդրակցութեան միջոցներէն, իր տնտեսութիւնը արգաւանջելու Համար, կ'ուզէ օգտուիլ Տաշիրի Հանքային,

Հողային և այլ Հարստութիւններէն: Բայց այս երկու միտեսակ շահագործութիւններուն մէջ տարբերութիւն մը կայ: Մինչ Վրաստանը նստելով Իրանի աջ ափին վրայ, կ'ուզէ Հայաստանի Գանձար փակել դեպի Արբելչյան և այլպիսով աւարքի քաղ զննել Հայաստանը և Արբելչյանը, Հայաստանը, ընդհակառակը, չուզէր ասով աւարքի ենթարկել Վրաստանը, այլ միտն ազատի Հարկատուութենէ: Մինչ Վրաստանը Տաշիրը Համարելով Սոմխեթիս (Հայաստան), կ'ուզէ ուրիշի Հողէն, Հանքէն և ջուրէն օգտուիլ, Հայաստան իրենը Համարելով զայնիւր երկրի բարբըը ինքը կ'ուզէ վանելիւ Հարց մը եւս կայ: Բացի Հայաստանի և Վրաստանի շահերէն, կայ եւ Տաշիրի ընկի ժողովրդին շահը զոր անտես չպիտի . առնենք: Իրանին աջ ափը գտնուող դաշտարանները և լեռնայ ստորուրի ընակիչները պէտք ունին Ջալալ-Օղլուի լեռներուն, իրենց անարանցներուն Համար, իրենց բերքերը ձայնելու Համար: և ընդհակառակը լեռնայ Գանձարէն կարեք ունի Եուլաւերին, Սատախուլին — Թէ՛ աշխատանքի եւ թէ Հողի ու Հարստու բերքերու Համար: Երկրին անբողջութեամբ է, որ ընակիչները պիտի կրնան մէկ Հաւաքական տնտեսութիւն ստեղծել, եւ եթէ տեղական ժողովրդին շահերը նկատի առնուին, ներկայ անբնական սահմանները պիտի Համարուէին տնտեսական մահաւան գիծեր Տաշիրի աղգաբնակչութեանը Համար:

\*\*\*

Բայց Հիմնական ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքի տեսակէտն է: Իբրեւ այդ բնկենք Տաշիրը: —

Համաձայն 1913-ի Կովկասեան Տարեգրքին, Բորչալուի գաւառը կը բռնէր 6036 քառ. վերստ տարածութիւն, 155,800 - ազգաբնակչութեամբ, որմէ

Ռուս եւ աղանդաւոր	9840
Եւրոպացի	3453
Վրացի	7533
Հայ	63,148
Յոյն	27,543
Շիա	17,930
Միւսնի	26,910

Այս թիւերը ցոյց կուտան, որ ցարբուր վարչական բաժանումով բացի Տաշիրէն, ամօր վրայ աւելցած են եւ Քիֆլիզ գաւառէն մասեր, որ կը գտնուին Իրանէն դեպի Հիւսիս, անք ձախ ալը, ուր նորէն Հայերը կը կազմեն մեծամասնութիւն: Մինչ անբողջ բնակչութեան 1,8% -ը կը ենթակայանեն Վրացիները, Հայերը 46,9% են: Աւերմն ազգաբնական տեսակետով անբողջ Բորչալուն Հայերու պիտի պատկանէր: Բայց եթէ նկատի առնենք եւ աշխարհագրական անբողջութիւնը եւ տնտեսական կապակցութիւնը, այդ պարագային պէտք էր դուրս ձգել Թրանսկէն դեպի Հիւսիս գտնուող Հողամասերը իրենց աղգաբնակչութեամբ, որով Բորչալուն պիտի մտնէր իր աշխարհագրական սահմաններուն մէջ: այդ Հաշուով Մայկային (Քրիլայէթի գաւառակ) պէտք է դուրս ձգել Աւջուան, Սարվանի, Բաշքէլի, Բէշթաշի, Գոնեթա Կարի դիւրախուրդները եւ միացնել Քիֆլիզ գաւառին: Եւ կ'առնին Քիլուտի գաւառակէն անջատել կիլիկ Աշլիլ, Սարվանի դիւրախուրդ:

բերը և ծխացնել Թիֆլիզի գաւառին և վերջապէս Բորչալուի գաւառակէն ալ պէտք է Ղուրաւ ձրել Բայաթրի, Գեափուրար-իի, Դէմուրզի Հասնայիի Կիւրախուճմբերը և ծխացնել նորէն Թիֆլիզ գաւառին Այդ պարագային պիտի ստացուէր բնական, ազգագրական և տնտեսական նիւաւոր մը նախկին Տաշիրի սահմաններով, եղբրուած Թրամ գետով և ազգաբնակչութեան հետեւակը կազմով։—

Ռուս և ազանդուոր	9840	կամ	7,9%
Շերտապցի	3453	«	2,8%
Վրացի	7533	«	6,1%
Հայ	63,148	«	50,7%
Յոյն	15,546	«	12,4%
Շիւա և Սիւնի	25,038	«	20,1%

Գումարը՝ 124,658 « 100%

Այս է բնական սահմաններով բաժնուած և տընտեսապէս շարկապուած Տաշիրը, որ մեր իրաւունքն է ոչ միայն պատմական, աշխարհագրական, տնտեսական, այլ և ազգագրական տեսակէտով, քանի որ Հայերը բացարձակ մեծամասնութիւն են (50,7%) իսկ Վրացիները (9,1%) միայն Գերմանացիներէն աւելի են Հռոմ ողորմելի թիւ կը ներկայացնեն Եթէ ազգերու կըտրուած սկզբունքը կ'ընդունին վրացի, Հայ կամ ռուս քուլտիկները, ինչո՞ւ այդ երկրամասը անըողչութեամբ չեն միացնել Հայաստանի։ Միացում մը կտարուած է Դաշակցութիւն Հարկադրանքին տակ, Տաշիրի գաւառակներէն Ջալալօղլին իր շրջանով (2182 քառ. վերստով 45,119 ազգաբնակչութեամբ) կցուած է Հայաստանի. սակայն տնկատար է այդ միացումը. Հայաստանի կցուած մասը լեռներ, կտարանք են, գուրկ Հարսուութիւններէ. այդ աղբաւտ երկրամասին ճամբաները կ'ուզուին դեպի Թրամ, բոլոր ճամբաներու զիտան իսնգիւած է Վրաստանը, իսկ այդ լեռներուն վրայ կ'երկրանցած է դուռ Հայտիթիւնը։ Այս ձեւի բաժանման հիմնական նպատակն է՝ նախ տնտեսապէս տկարացնել Ջալալօղլիի շրջանը (Ստեփանաւան), և երկրորդ՝ Հայերու տակօր պակսցնել Վրաստանի բռնազրուած երեք միւս գաւառներուն մէջ։ Ահա այս մտքախօսութեան Հաշիւներով է, որ ի վերջոյ Օրծոնիկիճէնները ողորմելի մաս մը զիջած են Հայաստանի։ Այսպէս թէ այնպէս, քանի որ Վրաստանի կողմէն Ջալալօղլիի 2182 քառ. վերստ տարածութիւնը և 45,119 ազգաբնակչութիւնը Հայաստանի մաս կը Համարեն, և միւս կողմէ քանի որ մենք ևս անկախութիւններ չունինք Թրամի ձայն ափը գտնուող երկրամասերուն վրայ, տեսնենք թէ Թրամի և ներկայ Հայաստանի միջեւ եղած վիճելի Հոգանաւոր ինչ տարածութիւն կը բռնէ և ինչ ազգագրական պատկեր կը ներկայացնէ։—

(Աղիւսակը տեսնել էջ 74)

Ահա այս է այն Հոգանաւոր, որ Վրաստանը տարբեր միջոցներով և ձեւերով յաջողած է գրաւել Հայաստանէն. այս է և այսօրուայ վիճելի երկրամասը, բացի Ախալքալախի գաւառէն։ Իբր երկրամաս մեծ պատառ մը չի ներկայացնել այդ Հոգը, մտտ 3000 քառ. վերստ, բայց եթէ ան քիչ նշա-

նակութիւն ունի Վրաստանի Համար իբր տարածութիւն, Հայաստանի Համար իւշոր երկիր մըն է, Համեմատած իր հողային աղբաւտութեան հետ։ Այստեղ միայն հողի խնդիր չկայ, այլ ևս այդ հողերու բնակեցման խնդիր, որ աւելի Հրամայական է Հայաստանի — քան որ և է երկրի Համար։ Վրաստանի մէջ 300,000 Հայութիւն ունինք, որուն մէկ խոշոր մասը տարագիր է, առանց Հաշուելու. Թրքահայ գաղթականներու հարցը, որ այսպէս թէ այնպէս պիտի մասնաւորապէս Հայաստանի վրայ Սակայն աւելի Հրամայական պահանջ կը դռնաւայ այդ փոքրիկ տարածութիւնը Հայաստանի կցելը, երկրի անըողչականութեան և Հայաստանի արտաքին աշխարհէի հետ կապակցութեան տեսակէտներէն։

Ազգաբնակչութեան տոկոսային յարաբերութիւններէն կը տեսնենք, որ Հայերը, բացի Եկատերինֆէլա գաւառակէն բացարձակ կամ Համեմատական մեծամասնութիւն կը կազմեն, իսկ անբողջ վիճելի մասին մէջ՝ Համեմատական մեծամասնութիւն։ Այդպէս, ընտելով որ Ջալալօղլիի շրջանը բաժնելով իր անըողչութիւնէն կը յուսացուի Հայութիւնը փոքրամասնութիւն՝ դարձնել մնացած երեք շրջաններու մէջ, բայց այդ մասամբ կ'ազդէ Համեմատական վրայ ևս նորէն Հայերը կը թան մեծամասնութիւն։ 28,849 Հայերու թիւը պէտք է Համարել նուազագոյնը, քանի որ գայն առած ենք 1912-ի վիճակագրական Հաշիւներէն։ Այսօր այդ թիւը բարձրացած է առնուազն 35—40,000-ի մեր ժողովուրդին Համար զգալի է այդ կորուսաւոր Բիջը ունեցել կորուստներ. ինչո՞ւ այս անտեղի Չլուրէ, չուրի այդ միացումով Հայ ժողովուրդին Հուսարձան խնդիրն ալ կը թեթեւանայ 40,000-ով ինչ կը վերաբերի Վրացիներուն, անոնք բոլոր գաւառակներու մէջ ոչինչ թիւ կը կազմեն. մէկին մէջ քնաւ չկան, երկրորդի մէջ ողորմելի, երրորդին մէջ մինչեւ 16%, ընդամենը անբողջ վիճելի մասին մէջ 7,633 հողի (9,5%) ինչո՞ւ այդ ողորմելի քանակութեան Համար 81,000 ժողովուրդ 3000 քառ. վերստ տարածութեամբ պիտի միանայ Վրաստանի։ Ինչո՞ւ այդ անորոգութիւնը Եթէ Վրաստանի Համար թանկ են 7,633 Վրացիները, նոյնքան և աւելի թանկ են մեր 30—40,000 Հայրենակիցները։ Եթէ Վրաստանը բնաւ չազգեր որ իր ցեղակիցները ինչան Հայաստանի սահմաններուն մէջ, այդ պարագային մենք ալ նոյն տեսակէտներով պիտի պահանջենք ոչ միայն Բորչալու, այլ և Թիֆլիզի գաւառը և քաղաքը, քանի որ մենք ենք մեծամասնութիւնը իրենց մայրաքաղաքին և անբողջ գաւառին մէջ։ Միայն այդ գաւառին մէջ մենք ունինք 92—100,000 Հայութիւն, առանց Հաշուելու Վրաստանի այլ մասերու մէջ ձգուած 200,000-ի մտտ Հայութիւնը։ Եթէ մենք բարեկամութիւնէ մղուած պատմական, ազգային տեսակէտներէ հարց չենք բարձրացնել Հայացուած Թիֆլիզը Հայաստանի մաս կամ միջազգային քաղաք դարձնուլու մասին, ինչպէս երբեմն կ'ընդունեն Ժուրապանները, ինչո՞ւ Վրացիները մեր արդար, բնական իրաւունքներուն դէմ երթալով չպիտի դիջին 7—8000 Վրացիներ ձգել մեր սահմաններուն մէջ։ Ինչ որ ալ ըլլայ. այդ Հոգանաւորը ազգագրական տեսակէտով բնաւ չեն կրնար մաս դռնաւայ Վրաստանի։ Վրացիներէն աւելի իրաւունք ունին Յոյները, որոնք մէկ գաւառակի մէջ 35% կը կազմեն, իսկ անբողջը 17,2%։ Յոյները բնաւ նպատակ

(ԹԻԻԵՐԸ ԿՆՈՆԵՆՔ 1913 Թ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏՄԵՆՈՅԵՆԸ)

Գրատեսիլ	Գրագրություններ	Գրիչ	Հայ	Վրացի	Մասնատեղաբնակ	Յոյն	Սլոն	Փերսիանացի	Գուճաբ	Տարածված. քան.	վերստ
Բողջալու	7	40	** 14,398	1282	8106	—	—	—	23,786	300	***
%	—	—	62%	5%	33%	—	—	—	100%	—	—
Եկատերինֆելա	7	44	3,168	—	11224	—	—	2595	17,008	700	—
%	—	—	18,1%	—	66,4%	—	—	15,5%	100%	—	—
Մալիա	11	94	11,283	6351	6143	14,000	875	786	39,438	1900	—
%	—	—	30%	16%	15%	35,5%	2%	1,5%	100%	—	—
ամբողջ վիճելի մասամբ	25	183	28843	7633	26,495	14,000	875	3381	81,233	2900	—
%	—	—	35,5%	9,5%	32,6%	17,2%	1,1%	4,1%	100%	—	—

չունին ո՞ր ինքնավարութիւն ստանալու ե ոչ ալ կը հետաքրքրուին Հայաստանով կամ Վրաստանով. անոնց հետաքրքրութիւնը միայն Մեծ Յունաստանն է և ամէն կերպ կ'ուզեն փոխադրուիլ հոն ե արդէն ծառով ձը փոխադրուած են և իրենց ըսեալ չողերը նօսրացած: Բ՛ով պիտի գրուէ Հայկական այդ երկրամասի գաղտարկուած կամ գաղտարկուելիք հողերը Վրացիները թէ Հայերը. բնականաբար Հայերը, քանի որ նախ՝ այդ երկիրը մերն է եղած և Յոյները՝ մեր երկրի հիւրերը. երկրորդ՝ Վրաստանի մէջ իսկ կան 50—60,000 անհոյ Հայեր, որոնցմէ շատ չեն ախորժիր Վրաստանի դեկալարները. ահա ճամբայ մը ևս թէ Վրաստանէն հեռացնելու այդ տարազիրները և թէ հայ գաղթականական լընդիրը թեթևեղու:

Անփոփելով բոլոր սուեանները, կ'ունենանք հետեւեալ եզրակացութիւնը:

Մասնօ. \* Գրագրություններն են 1). Բողջալուէն.— Կաշապի, Օփրէթ, Մասալու, Զօչկանի Մացածը, Մուլաբը, Կըրըլիլ, Սուսայ: 2) Եկատերինֆելուէն.— Սարուխիլ, Բօլոնիա Բափանան, Եկատերինֆելու, Կվէշ, Սարաչիլ, Թախրաօ՛ Դորբազ: 3) Մալիայէն.— Աւրախ, Ալէքսանդրէնֆելա, Ամաճիլ՝ Աշխալա, Բարձակաղը, Բաշէզիտ, Գոմարէթ, Դէմարբուլա, Դուճնիլո, Կամարիլի, Նարաէվան:

Մասնօ. \*\* Բողջալու գուտաէն միևիկի երկու հայ, Քէօբիպուրի երկու թուրք գիւղերը և Զօչկանի երկու հայ գիւղերը միացուած են Հայաստանի այն ինչ տարրինապէս նոյն գրագրություններն Մացած հայ գրագրերը միացուած են Վրաստանին, այդպիսով Համայնքի կէտը կ'իյնայ Վրաստանի, կէտը՝ Հայաստանի մէջ:

Մասնօ. \*\*\* Տարածվածութիւնները առնուած են ձուտար հաշուով, բայց տարբերութիւնը չի կրնար անցնիլ 100—150 վերստը:

ա). Տաշերի գուտաը պատմականորէն կը պատկանի Հայաստանի.

բ). Անոր բնական սահմանները կը սկսին Իրամէնն և կը վերջանան Փոքր Կովկասի կատարներուն վրայ.

գ). Այդ տարածութիւնը, 5000—5500 քառ. վերստ, մէկ ամբողջականութիւն կը կազմէ տնտեսական, աշխարհագրական և ազգագրական տեսակէտներէ:

դ). Այդ ամբողջական միութիւնը Հայաստանի օրկանական մասը կը կազմէ, քանի որ կ'իյնայ Հայկական Կովկասին վրայ և բնակչութեամբ հայ է:

ե). Այդ գաւառը գուտն է Հայաստանի. այդ գրան բանալիները իր ձեռքն ունենալով է, որ ան կրնայ ապահովի իր անկախ տնտեսութիւնը և անկախ քաղաքականութիւնը հանդէպ Վրաստանի, Ռուսաստանի և Արբէշներու:

զ). Քանի ուրիշին ձեռքն է այդ գուտը, բոլորովին կրամ պէտք է համարել Ախալքալաքը, կորուսելու վտանգին ենթակայ՝ Գիլիջանի, Իջնանի շրջանները և անապահով նոյն իսկ Շիրակը:

է). Հայաստանի համար խիստ կարեւոր է իր գաւառներու միացումը Հայկական նահանգներուն:

Անհրաժեշտ է լրացնել այս տարրական պահանջը, վերջնապէս արձատսախիլ բնուող համար ժողովրդական ղեկավարութիւնները Օրժոնիկիձէները չպիտի կրնան ոչ սուրիներով և ոչ ալ կերծաւոր ճառերով մթաքնել միացերը, իսկ հայ բուշեիկները պտուր թէ լաջողին տեսականացնել իրենց տիրապետութիւնը խմբական բանաւարութիւններով և արտոններով: Ասոր կը հասնին միայն այն ատեն, երբ հայ ժողովուրդը ամբողջութեամբ քշեն ղեկի Ռուսաստանի սառնամանիքները: Իսկ եթէ իրենց նպատակն է հայ ժողովուրդին հարազատ կուսակցութիւնը դառնալ, պէտք է այդ անմիա, փորձուած միջոցները մէկ կողմ նետելով, ջանան գահացնել ազգային հիմնական պահանջները:

ԻՌՈՒՅԷՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ

## ՎԵՐՋԻՆ ԴՐՈՒՆԳԸ

Ե Ի

### ԸՆԿՈՒԹԵԱՆ ՍԵՐՈՒՆԳԸ

1

Հինգ տարի անցած է այն օրէն, երբ Հայ աշխատար ժողովուրդը մէկ ծարուր պէս առջի կանգնեցաւ և տապալեց բոլշեւիկեան բռնակալութիւնը:

Փետրուարեան ապստամբութիւնը ոչ միայն խորտակեց օրուայ քերտործ իշխանութիւնը, այլ և Հիմնադէս յեղաշրջեց Հայաստանի ընկերային-քաղաքական ճառագիւթները: Հինգ տարի յետոյ, կարելի է աւելի պաշարելու թեանք անդրադառնալ Փետր. 18-ի յեղափոխութեան և ընտրուել շարժումը:

Հայ ժողովուրդը փոթորիկներու մէջ կը Հիմնէր իր անկախութիւնը: Դեպքերը զինք կձկեր էին Սեւանայ լճին ափը, ու երբ կը տարածէր դէպի իր քնական տաճանները, և Հեռոցետէ ազգային պետական կազմակերպութիւնը դառնար, Ռուսաստանը և Ցանկաստանը իրարու Հետ դաշնակցած իրենց Հարուածներու առկ կ'առնէին Հայաստանը:

Հայ ժողովուրդի քաղաքական Հակուռնիքը և կորովը փորձութեան կ'ենթարկուէին Մայիսեան խռովութեան օրերուն և Յ. Դաշնակցութիւնը մինչև 1920 Մայիս եղած էր վերին ստիճանի բարեացական Հանդէպ բոլոր ընդդիմադիր կուսակցութիւններուն, ինչպէս նաև բոլշեւիկներու Բայց, մայիսեան խռովութիւնները և թուրք-բաթարական շրջաններու ազատամբութիւնները ուղղուած էին Հայաստանի Հանրապետութեան գոյութեանը դէմ, ու կը Հարկադրէին մեր կուսակցութիւնը դառնալ խիստ, և թող չտայ որ ընդդիմադիր տարրերը, թուրք ապստամբ շրջաններու Հետ մեռք մեռքի՝ տապալեն նորակազմ Հանրապետութիւնը: Այս շարժման ընթացքին, արեւմտահայութիւնը կուս շարքերով և խնդրուց ջատածով Հրապարակ եկաւ Հայրենիքի անկախութիւնը պաշտպանելու: Ապստամբութիւնը զպստեցաւ, և մեր զօրքերը զօրաւոր ճակտ մը կազմեցին Դիվիզիոն-Ղազախի շրջանի մէջ, զինադրելով առև և աղբբլշանան զօրքերուն:

Ազգային պետութիւն մը կազմելու և անկախօրէն դէպի Հայկական վերածնունդը դիմելու ձգտումը դեռ նոր կ'ամբար պնդուէր, երբ Հայաստան պարտուեցաւ թրքական պատերազմին մէջ, Հարափ և Հիւսիսի գերազանց տներու Խնձան առիկ Այդ խռով Հարսուածին Հեռուանքով, իր ազգային քաղաքական դաւանանքն ալ — անկախ ապրելու ձգտումը — մեծապէս պարտութեան կը մատնուէր: Այս կոտորածները կը ստիպէր մեզ կամովին հրժարուիլ իշխանութիւնէ 1920 Դեկտ. 29ին:

Ռուսաստանը կուգար  
Հայաստանը բոլորովին տկարացած էր: Թուրքերը կեցեր էին Ախուրեանի և Արաքսի ափը: Ռուսական «օրինաստ»  
digitised by

սիտը» փրկութեան նոր Խնտուարճ մը կը Համարուէր:  
Միայն Դաշնակցութեան բազմաճիւղ կազմակերպութեան զիտուր կորիզներն էին որ ազգային-քաղաքական Հիմնական ուղիներ մը ունէին. իսկ մնացած մասը առակաբեռութիւնն ու լայն զանգուածները միգրիկական վտանգի ծանուրեան օակ կ'էա, պատրաստեիք ենք արհաւելուել որ եւ է ուժի, պայմանաւ որ այդ ուժը քրքականը չըլլար:  
Այդ ընդհանուր ժխորին մէջ, Հրապարակ դրուած էր թրքական վտանգը և առական Հովանին՝ իր երեւելի և աներեւոյթ բարեքներով, սրոնք խոտաացուած էին Մոսկուայի դործակալներուն կողմէ:

Ռուսաստանը յաղթեց: Հայ ժողովուրդը, սիրտը կոտոր, լաւեխան ենթարկուեցաւ ռուսական ուժին:  
Այս մուր միջոցորտին մէջ էր որ բոլշեւիկները եկան կուսակարելու Հայաստանը, մեծապէս բարխտապարտ մատու թուրք փաշաներուն և մանաւանդ չավուտներուն: ՚

Ռիտո մարք բարի մը պէս բոլշեւիկեան իշխանութիւնը նստաւ Հայ ժողովուրդի կրճքին Հուռ ու անմար ժողովուրդը մտածեց ու վերադնահաստեց: Երեք ամիսներու թիպապատ Հակամարդկային տիրապետութիւն փութացուց այդ վերադնահաստման ընթացքը ժողովուրդը նորէն փրկութեան Ծաւապարճ մը որսնեց: Ու ջնդուեցաւ

Պայթեցաւ փետրուարեան ապստամբութիւնը:  
Այլ շարժումը եկաւ վերջնական կազապարտ մտայն քաղաքական Համազումներուն և զպատկընդորուն: Փեարուարի 18ը դարձաւ սուր քաղաքական ռքրակեքը, որ սրտակիցցուեցաւ երկու իրարմեքք քաղաքական Հասանքներու միք և եղպա հիմնական ելակեքը Դաւանակցութեան Բաղախական գործաւեարեան:

## II

Փետրուար 18ը հայ ժողովուրդի աւխաստարական յեղափոխութիւնն է:

Եւ իրօք, մէկ կողմը կանգնած էին Հայ աշխատարական զանգուածները, երէկուս բովէն անցած ու թրձուած, որոնք և Յ. Դաշնակցութեան զիւղական կազմակերպութիւններու շուրջը կը Համախմբուէին. իսկ միւս կողմը՝ Այրբեշանէն և Ռուսաստանէն եկած Հայ առև և թուրք բոլշեւիկ դործակալներն էին, որոնց կը միանային Երեւանի և Ալեքսանդրաբոլ մէջ արգելափակուած բոլշեւիկները: Այս նոր իշխանութիւնը, իրարու Հակամարտ ընկերային սկրքուցներով, լայց դործակից կողպատի ու մարդասպանութիւն, քանդումն ու մատնութեան մէջ, կուգային դուրսէն և դահիճի մը լրբութեանը, մարակի ու ստրճանակի Հարուածներով կը սկսէին կուսակարել երկիրը:

Քիչ մը աջ պատցուցեք այդ օրերու անցքերուն վրայ և պիտի տեսնէք թէ ի՞նչպէս զիւղական մարդիկ կուլանայ, երէկուս ցարական լրբեր (որ սքեած էր ռուսական յեղափոխութիւնէն յետոյ) շահպետը, պետական զեղծարար պաշտօնեաները, «մուգերխտ»ը (ոչ յեղափոխական և ոչ ալ ահաբեկիչ, այլ պարզապէս Հանժամխտ, վախկտ, բայց ստրճանակը միշտ կորքին) և քրէական յանցանքով Հետապնդուած անՀատները մէկ մարդու պէս, սրբազան դաշնակցութեանը մը դործակցեցան բոլշեւիկեան խռճանակներն:



րուն: Հայ աշխատաւորութիւնը, պարտուած թրքական պատերազմէն, արհնւագքած ու ուժասպառ եղած էր: Գաշնակցութեան խաղաղ տեսլաւորութեամբ ղեկավարներու մէկ մասը երկրէն դուրս ելած էր, իսկ միւս մասը ձերբակալուած հրահրուած էր Երևանի, Էջմիածնի, Աշտարակի, Ղամաթլուի, Բաղաբաշի եւ Ախտայի բանտերուն մէջ (այսհաշուին մէջ չեն ձանդար Ղարաթլուի եւ Գիլիճանի բանտարկեալները, զորս Փետր. 18ին կարելի չեղաւ ազատել): Միւսինքն մէջ է իւրեանց կը Մասին Քառիկ վրայ հաշտուած բանի մը զոր-միջնորդ: Թէև Գաշնակցութեան ղեկավար մարմիններու անդամներն ա՛ր բոլոր գործած ամբարներ բանտարկուած էին, սակայն Դաւենակցութեան ողնուստը, աշխատաւորական յեղափոխական զանգուածը կը մնար: Գիւղին մէջ հնազանդ ու լուծի ենթակայ իր փակի աջը ուղղով դեպի թրքական վտանգը, իսկ յայտ աչքը դէպի նոր եկող Ռուսաստանը, ան կը սպասէր ու կը սուրբէր:

Այս աշխատաւորական զանգուածը իր աչքով տեսաւ ու համոզուեցաւ որ Ռուսաստանը ոչ միայն իր սպասած բարիքները չէ բերած, կուգայ ոչ թէ իրեն թշնամի թուրքին, այլ՝ իրեն անոր բարեկամն ու զինակիցը: Իր համբերութեան բաժակը լեցաւ, երբ տեսաւ թէ բոլշեակիական նոր իշխանութիւնը ոչ աղաքյին, ոչ անտեսական, ոչ քաղաքական էր ու այլ դասակարգային օգտու չունէր: Իրօք հակաշրջափոխութիւն մըն էր եղածը, որ կուգար սէջաջեցնել ուսուսական փետրուարեան յեղափոխութեան և Հայաստանի անկախութեան շրջանի բոլոր ազգային և դասակարգային ազատութիւններն ու նուաճումները, խայտարեղ տարբիք մը կ'ստէր, ոչնչացնէր Արքեպիսկոպոսի, Նախիջևանի և Թուրքիոյ բեզէրուն և՛ փաշաներուն: Այդ հարաւորութիւն կեդրոնական նպատակն էր կոտորել կաղնակեացուած հայ աշխատաւորութեան մեջը, ստեղծելով զայն անօճակցութեան անօճակցութեան:

Փոսան և չորս ժամուայ զնցող հարուածով մը կը տապալէր բոլշեակիական բռնակալութիւնը և ճարդիկ ղեկավարները իրենց բոլոր գործակիցներով և ուսուսական գունդերով կ'ազատաստէին: Բոլշեակցութեան և Նախիջևանի իւսներուն ջով, իրենց արժանաւոր զաշնակիցներուն ծառ:

Ապաստանութիւնը և՛ ժողովրդական էր և՛ դաշնակցական-կուսակցական:

Ժողովրդական էր այն պատճառով որ ամբողջ աշխատաւորութիւնը մէկէն ցնցուեցաւ, ինչ ըստ ձայն և ինքը գեղեցիկ պէջ յեղափոխութեան համար: Երբ անցերը իրարու ջով գտաւորէր, կը տեսնէր թէ ինչպէս նոր-Բայազետի, Արշակունիի և Կարապաղի իրապետներին նոյն օրերուն, աւուրեց յոյս, փենկալու Երևանէն և Էջմիածինէն: Նախ որ յարաբերութիւնները խիստ գծուար էին. գաղտնապահութիւնը կը պահպարէր միայն քիչերուն հետ խօսել և գրուշանայ գրուար հրահանգներէ, իսկ բերանացի պրպականաբ անհնարին էր: Կանայն ժողովուրդը կազմակերպուած բանակի մը պէս դատարատ էր շարժելու: Ի՞նչ իր վճիռը տուած էր: Դաւենակցական շարժով էր, անոր համար, որ դաշնակցական մէկ երկու նորակազմ մարմիններ կային, որոնք մէկը միւսին օգտուած՝ կազմակերպած աշխատաւորութեան հետ էին, շարժումները կը ղեկավարէին, կարգ ու կանոնը

կը պահապանէին և ժողովրդի մտածումներն ու բաղանջները ընդհանուր յայտարարի մը կը բերէին: Թէև Բիբոսը դրոշմակալ չունէր, Կ. Կոմիտէիցը ցրուած էին, բայց Գաշնակցութեան յեղափոխական ոգին կուտ էր, պատասխանատուութեան գիտակցութիւնը՝ խոր:

Ժողովրդական ու յեղափոխական այդ ապաստանութեան և մտնական յետագայ բառասանահինգործայ զննարկութեան ասանք մեջ հետ էին Ա. յեղափոխականները, Ս. Դեմոկրատները, ժողովրդական թէ պահպանողական այլ հասանքներու պատկանողները: Մեզ դէմ կը մնային բոլշեակիներն ու թիւրք-թաթարական սարսերը:

III

Երբ ըննութեան ասանքը Հայաստանի և Լեւոնհայաստանի հակաբոլշեակիական շարժումները, անմիջապէս կը տեսնէր Գաշնակցութեան հորսկը և հայ ժողովուրդի անվերապահ համակրանքը հանդէպ մեր կուսակցութեան յեղափոխական մեղաբարկիներուն:

Հայաստանի մէջ տեղի ունեցած ապաստանութիւններն ու կռիւները քաղաքացիական կռուի հակառակն չունէին: Իրենց էութեամբ այդ կռիւները ուղղուած էին օտար տիրապետութեան դէմ:

1920 Մայիսին, երբ բոլշեակիները իստալութիւններ յարուցին ամբողջ Հայաստանի մէջ, տեսնել թէ ինչպէս ուսուսական կարմիր գոջը եկաւ իր տիրապետութիւնը տարածեց Դարաբաղի և Ջանգեղուքի վերև, փրկելով Կախիջևանի հակահայ խաները: Հայ ինտելիգենտ ժողովուրդը տեղի տուաւ, սպասելով Մեծն Ռուսաստանի փոստացած հրաշքներուն եւ նկող ուժին մէջ տեսնելով դաւենակց մը հանգիստ բարբառական սարսերուն:

Հայաստանը կրցած էր դապի բոլշեակիական ապաստանութիւնը եւ հաստատ կը մնար իր անկախութեան տեսակետին վրայ: Բայց Ռուսաստանի դաշնակց թուրքերին, այս անգամ, կը հարուածէր մեզ, տեսնելով որ Լեւոնհայաստանը արդէն դրուուած է Ռուսաստանէն ու Արքեպիսկոպոսի, իսկ նորակազմ Հայաստանը պէտք է:

Այս հարուածէն լիտոյ, Հայ ժողովուրդը մեծ սպառնալիքներով ընդունեց ուսուսական սուր, միշտ նկատել անհնար լով իր ֆիզիքական և քաղաքական գորութիւնը:

Հայ ժողովուրդն ու մտաւորականութիւնը իրենց աչքեջով տեսան նոր Ռուսաստանը չափեցին զայն տնտեսական և քաղաքական տեսակետով, մտնական վերջնական պատասխանը ստացան յայն յայնի գոր դրած էին Ռուսիի վրայ, թրքական վտանգը փանելու համար: Լեւոնհայաստանը որ միշտ անկախ կը մնար, մէկ մարտու պէս սարսի կանգնեցաւ դիմադրելու բոլշեակիական արշաւանքին: Իսկ Հայաստանի մէջ երեք ամիսը բաւ եղաւ որ ժողովուրդը իր վերագնահատուած կատարէր, և փետրուարեան փառաւոր ապաստանութեամբ իր քաղաքական դասանալը հրապարակէր կարուկ և որոշ: Հայ ժողովուրդը անձնական դաւաճ փորձով, երկար ստաստումներէ յետոյ, պայմարով եւ յեղափոխութեամբ կը ճողէր իր քաղաքական ուղիին: Կը դարէին Ռուսաստանի վրայ դրուած յոյսերը և քաղաքական վառ երազները:

Ռուսական «օրհանգստի» վեցեակյան հարուած կը ստանար Փետրուար 18-ով:

Այլևս բոլորն ալ Հոսոգոլեացն թէ՛ բոլշեիկեան Ռուսաստանը, սերտօրէն դաշնակցած թուրք պետութեան, Հայուն Համար Թուրքին իշխանութիւն չափով ընէ: Իսկ Հայ ժողովրդի Հողային անօրոյտ թիւը. զիր ու ջրան Հայութեան կեդրոնացուածը, Տաճկահայաստանի եւ Ռուսահայաստանի միացումը, և ազգային պետութեան մը ստեղծումը կարելի է ճիշդ, այսօրուայ աշխարհակալ Թուրքիոյ դէմ շարժելով: Դեպքերը կը ցուցնեն թէ բոլշեիկեան Ռուսաստանը երբէք չզլկտի թշնամանայ քեճմոլական Թուրքիոյ Հետ, Հայ ժողովրդի կեանքի ու մահուան ինդիքը լուծելու Համար: Բոլշեիկեան Ռուսաստանը կրնայ միշտ ալ իր մէջ անուցանել ամբողջ Թուրքիոյ կցումը և խորհրդայնացումը, բայց այդ չիրթոր Հայկական դարձարձակի վրայով Ամենայն Հաւանականութեանը խորհրդային Թուրքիա մը, միացած բոլշեիկեան Ռուսաստանին, պիտի դառնայ աւելի վտանգաւոր մեզ. Հայերուս, իր թուրանական ծրագրով, քան այժմու կզկացած վիճակով Թուրքիոյն: Հոնուրով չափով պարսպի և կուշտ փոր մը Հոյց ուտելը ազդի մը ապրելու և վերածնունդի ճանապարհը չեն, այլ ֆիզիքական գոյութեան պահանջը: Հայ ժողովուրդը ինքնամփոփուած, իր ներքին ուժերու խնայման ու դասաւորութեան մեջ կը գտնի իր փրկութեան համապարհը: Գնանքի դառն փորձերը իրեն սորվեցուցին որ մեծ ազդերն ու դէպքերը փոքր ժողովրդի մը վրայէն կրնան անցնիլ, ու այդ ժողովուրդը կամ կ'ընկճուի և կ'ամիր իր վերածնունդի պահանջութիւնը կը կորսնցնէ, եթէ ներուժ կազմակերպութիւն մը չունի: Իսկ եթէ քաղաքական անցքերը.— Հիւսիսէն թէ արեւմուտէն,— մեզի նպատուոր դասաւորութիւն մը ստանան, աւելի՛ լաւ:

IV

Փետրուարեան ապստամբութեան խելայից թափը, ժողովուրդի անհուն հրճուանքը կարելի է բացատրել անկախ պետութեան, ազատ հայրենիք ունենալու բուռն բաղձանքով: Ազգային անկախութեան ազդակն էր որ կը պարտաւոր փետրուարեան ցնդումներուն մէջ: Անշուշտ մեծ գործ էր երկու Հազարէ աւելի մասաւորական և զինուորական զործիչներու աջատուէր, քաղաքացիական ազատութեան վերահաստատումը, բոլշեիկեան աւարտուներու վտարումը: Բայց այդ բոլորէն վեր կը խօսէր քաղաքական խոր դիտակցութիւնը — վերականգնել կորսուած անկախութիւնը և Հայրենիքը ազատել օտար ու անօրուս լուծէն, ստեղծել Հարազատ վարչութիւն մը, ժողովուրդի տիրող մասնակից դարձնելով Հայրենիքի զարգացման գործին:

Փետրուարեան, ինչպէս և Լեւոնահայաստանի անցքերը Հիմնապէս կազմին և կ'օգտին Հայ ժողովուրդին քաղաքական մասնազտութիւնը: Եւ այսօր, Հայ ժողովրդի Հոսո գահազուտմանը, կազմակերպուած է Վ. Գաշնակցութիւնը, Հայ մասաւորականութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կանգնած կը մնան անկախութեան, Հողային լայնացման և Հազարաման անակէտին վրայ: Իսկ Հայ բոլշեիկները, մասկաւորներն

ու շարք մը խայտարեւո տարբեր փառք կուտան Ռուսաստանի Հզատակ, նեղ ու սեղծուած երկրի մը, զորս ձգելով երկու միլիոնէն աւելի Հայութիւն մը, բանդելով բոլոր Հարուստ քաղաքական հեռակարները և թուճք կանգնելով Հայ ժողովրդի վերածնունդի ճամբան վրայ:

Անկախութեան կուսակիցները կը տեսնեն թէ ինչպէս Հայ ժողովրդի մեծամասնութիւնը անՀայրենիք կը թափուի ու կը ծիւրի, երթակայ անստակուս և քաղաքական Հարածանքներու, կը տեսնեն թէ ինչպէս յարածուն Հայ ժողովուրդը Հարկադրուած է թողուլ Հայաստանը և անցնիլ Ռուսաստան, զիմանալու Համար անտեսական դաժան պայմաններուն, և այս բոլորը Հակառակ բոլշեիկներու աւուներուն և առուակներուն, որոնք սիրած են Հիքեթիւնիւ կարգը անցնիլ: Այդ բոլորի կողքին կը տեսնեն նաև սահմանակից Տաճկահայաստանը, կարծաշխատուոր բաղուկներու և զորի քնակչութիւն: Հայ ժողովուրդը քաղաքական եւ ոյր տեսական պահանջներու բնական մղումով կը ձգտի միացնել Հայաստանին Անկախութեան եւ միացնել Հայաստանի ընդունմանը մուտած, միս ու արխիւ գործած են է. Գաշնակցութեան, ինչպէս և ժողովրդական գանգաւածներուն Համար:

Կարճ խօսքով, Փետրուարեան ապստամբութիւնը կը դառնայ այն գործակէտը, որմէ լիտայ դաշնակցական երկուստարդութիւնը, արտասահմանի, Երկրի եւ Ռուսաստանի մէջ կը Համախմբուի անկախութեան ու ազգային պետութեան քաղաքական նպատակին շուրջը: Փետրուար 18ը կը սեղծէ անկախութեան մարտիկ սերունդ մը, որ այսօր ողջնաւոր կը կազմէ Վ. Գաշնակցութեան, ինչպէս Հայաստանի եւ Գովկասի մէջ, այնպէս ալ Քաւկասի-միջնա Փրակա, Սիւրիայից միջնա Պարթի և Ամերիկո:

Առաջին մէկ երկու տարիներու ընթացքին, Ռուսաստանի եւ Գովկասի թուճ ու բուճին մէջ, ինչպէս նաեւ Գարսի անկման, ու Լօզանի դաշնադրութեան բեկումները Հայագրտազատման արգելք կ'ըլլային: Բայց Հիմա, կը ուշադրութեան կ'առնենք երկրի երկուստարդութեան մասնազտման ու բաղձանքները, կը կռնենք անոր քաղաքական Հաստատութիւնը, իկատի կ'առնենք կուսակցական դերագրին ժողովներու որոշումներն ու վերահաստատութիւնները, կը տեսնենք որ փետրուարեան ապստամբութիւնը իր հետ բերած է քաղաքական որոշ թարմութիւն մեր կուսակցութեան, եւ ինչ որ կարեւորն է, բացորոշ ու անսպառք քաղաքական ուղեգիծ մը պարտադրած է բոլորին:

Քաղաքական պայքարին մէջ մեծ ուժէր ունին միակամութիւնը, հաւատք և կորովը: Փետրուար 18ը ամբողջով աչլ աւարելութիւնները: Անցնուլ Հիշող տարիներու ընթացքին, տեղի ու աւելի աչլ ուղղութեանը կը գործէ մեր կուսակցութիւնը, խառնելով յարաբերական կուսական քաղաքական շղթան որ իրարու կը միացնէ Հեռաւոր գագաթին միջնա Հայաստանի լուսային անկիւն մը թուած «Գաշնակցութեան մասնութեան» ներկայացուցիչները:

V

Հայ-միջրկան դատարարին պարտութեան Հետևանքով, ոչ միայն Հայ ժողովուրդի մէջը կարած էր, այլ և և

ծնը: Հաղի ինքզինքին կուզար, բայց կը տեսնէր թրքական կրօնկները որ զինք կը ձնշէին Երազդի եւ Ախուրեանի ասիերուն վրայ: Անկախութիւնը կորսնցուցած, Հայ ժողովրդի Եւր ժշուր փշուր ելած, կ'ենթադրուէր ուրիշ լուծի ճը, առականին, որ փոխանակ իր մէջքը շտկելու, աւելի կը Հարուածէր, թէ Ֆիզքըպուէ եւ թէ բարբառապէս:

Փնտրութեան Հտակահարուածը եկու զգետնուած ժողովուրդի ճը մէջքը շտկելու եւ զգացնելու որ տրորուելու եւ կոտորուելու արժանի Հոս մը չէինք: Այդ հոգոր պոռնկուծը ազգային եսի վերականգնումն էր, թրքական պարտութեան վրէժխնդրութիւնն էր, փախստածն մը յետոյ եզամբ միացադոյն եւ կորովի ուշկայարսակումն էր, որ կը փրկէր հայ ժողովրդի մարդկային հպարտութիւնն ու պատիւը:

Այդ Հարուածին առջեւ, աղշած Ֆացած էին բարբ օտարները, իրենք Ռուսիքը, մեր զէմ հեղձ առուական բանակի Հրամանատարները եւ թուրքերը, տեսնելով թէ ինչպէս երեկուայ պարտուած ու նահանջող ժողովուրդը կորովի շարժում մը փորձէր, եւ ինչ որ աւելի ուշադրու էր, ապա տաճարութենէն յետոյ, քանն եւ Հինգ օրուայ անդուլ ու անհող-Հոտ ձակատամարտներու ընթացքին, Հայ ժողովրդական վաշտերը կորովի փնտրուութիւն ցոյց տուին առական բանակին ու Հատ անգամ պարտութեան ծանանցին գային:

Հայաստանը Ռուսերու կողմէ գրաւուցաւ թիզ տա թիզ, ահաւելի կ'ուճեցրէր: Այն օրերուն, Գաշնակութեան եւ անոր հիամազործակից բոլոր հրատաքներու ղեկավարները, մտաւորականութիւնը եւ գիւղական գիւնտըները ցոյց տուին վճռական կամք, կուռի ընդունակութիւն եւ կատարեալ համերաշխութիւն:

Ռուսներն ու իրենց գործիչ Հայ բոլշեւիկները ուղտական սակնեկներու ուժով անկէ կ'ըկին տրեքտիկ մեր երկրին: Բայց, Ապրիլ 2ին, եսնեց այլեւ չգտան Դեկտեմբեր 2-ի կորստանակ Հայ ժողովուրդը: Էէհինի նամակը Միտանիկանին՝ կը թելադրէր տեղական պայմանները նկատի առնել ու ախպէս գործել: Պարտուած յիկոմը կուզար փետրուար 18ի անողքը Հարուածներուն ասկ վերադաստելու իր ուղին... Հայաստանի մէջ:

Հինգ տարի անցած է այն օրէն. բայց Հայաստանի բոլշեւիկներն կառավարութիւնը կը մնայ բարոյագլէս պարտուած, իսկ ժողովուրդը, լուռ բայց յաղթական:

Կ. ՍԱՅՈՒՆԻ

«ԿՐՕՇԱԿ»- ԲԱՄԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Խնդրում ենք մեր այն բաժանորդներին, որոնք մտադիր չեն «Կրօշակի» ժողովածու կազմել, ուղարկել մեզ անցնելու տարւայ առաջին եւ երկրորդ հիմարները, որոնք փոխարժեքը կարող են ստանալ մեզմից ղերամով կամ նոր համարներով:

«ԿՐՕՇԱԿ»-Ի ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՑԻՆ

ՆՈՐԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՍՏՈՒՄ

Յարական Ռուսաստանի զիւղացիութեան հոծ գանգաւոր սակաւաւող էր եւ աղքատ. դրա համար էր նա միշտ վարդազոյն յոյսեր էր քածուած դէպք Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը, որ պիտի գար վերջ տալու նրա տառապանքներին: Արդ, հոկտեմբերեան տեղափոխութիւնը արգարացրէր այս յոյսերը. նրա շնորհիւ լաւացա՞ն զիւղացու դրութիւնը: Ի հարկէ ոչ: Այսօր զիւղացին աւելի աղքատ, աւելի թշուառ կ'անք ունի, քան ցարական տիրապետութեան ամենավատ օրերին:

Սրա զլխաւոր պատճառն այն է, որ զիւղացին միջոցներ չունի հողը ժամանակի պահանջներին հարմար մշակելու: Ճիշդ է, հոկտեմբերեան յեղափոխութիւնը լաւ կամ վատ ձեռով բաւարարեց զիւղացու հողային կարիքը. բայց դրա հետ միասին նա իր քաղաքացիական պատերազմներով, վարչական կամ մայականութիւններով եւ կազմակերպուած աշխատանքային ջայթաջի երկրի ընդհանուր տնտեսութիւնը, որ զիւղացին զրկեց ձեռք բերած հողից օգտուելու հնարաւորութիւնից: Հողը մշակելու համար հարկաւոր էին զիւղատնտեսական մեքենաները եւ զործիքները — չկային. տեղական զործարանները չէին արտադրում, իսկ զբոսից բերել տալ չէր լինում. նարկաւոր էին աշխատուոր անասունները — չկային, կամ նազել չէին ստակալի չափերով. հարկաւոր էին որոշ զրգամական միջոցներ — այդ էլ հազար ու մի ձեռով ընդհացրէլ էին:

Այս հանգամանքներով զիւղացին, նախնական միջոցներով, հազիւ հազ կարողանում էր արտադրել այնքան, որ բաւականանայ իր ընտանիքի ապրուստի համար: Բայց այստեղ էլ վրայ էր հասնում պետական հարկահանք, մտրակով ձեռքի՝ եւ իւրով զիւղացուցը նրա ամբողջ «աւելցուկը», այսինքն այն, ինչ որ զիւղացին պէտք է շուկայ հանէր իր անմիջական կարիքները — հագուստ, շաքար, զործիքներ — բաւարարելու համար:

Երբ պարզուեց, որ այս բաշխութեան կային հարկահանութեան երեսից զիւղացիները կամ կրճատուած էին իրենց ցանքը մինչեւ անմիջական անուղի համար անհրաժեշտ միջիմուռը կամ հրոսակային զործողութիւնների դիմում խորհրդային իշխանութիւնը փոխեց արկահանութեան ձեւը եւ զիւղացիներին կողոպտելու մի նոր միջոցի դիմաց: Մեր խօսքը վերաբերում է արդիւնաբերական ապրանքների այն անելի թիւն կացմանը, որ այսօր մշակուանքի պէս ծանրացած է զիւղացիութեան վրայ, խորհրդային դրամատու:—

Յայտնի է, որ բոլշեւիկեան իշխանութիւնը երկրի արդիւնաբերութեան (ինդուստրիա) մեծ մասը «ազգայնացնելով», իր ձեռքն է կեդրոնացրել: Եայտնի է նաեւ, որ շնորհիւ նրա ապիկարութեան, պետականացրած բոլոր զործարանները իրենց հաշիւները փակում են հսկայական գնաններով: Այս մտախ մտայն

Տարորինակ է բուռնի յամադրութիւնը կաղափարների աշխարհում Այդ վերջինները գոյորշինում են յաճախ, մինչդեռ նրանց էութիւնը ճշտող նախնական որակումները յամադրելի շարունակում են ապրել: Այգպէս է մարդային սոցիալագործութեան դրեթէ բոլոր սասպրեղներում: Ամէնքի այսորուայ քաղաքացիներ երբ յոյն է կոչուում, այդ ին նշանակում, որ նա նման է այն յոյնին, որը ապրում էր Արիստոտելի, Սոկրատի կամ Պլատոնի սրբերին: Եղիպտացին, որ հնգարտ ըստի որ առաջ բուրգեր էր կանոցում Աֆրիկայի և ռա յանի որ անայտներում, նմանութիւն չունի այն ֆելապի հետ, որ Յայն անուան տակ այսօր բամբակ է մշակում Ենդուր արգաւանդ հովիտներում: Յամադրելի Եայն բաները ուղիւստ են, տեւականօրէն իրենց իմաստը փոխելով: Անա ճիշտ այսպէս փոխուած են նաեւ ընկերվարականներն ու ընկերվարութիւնը, պահելով մէկտեղ իրենց հին սնունը:

1914-ի ընկերվարութիւնը, (մինչպատերազմեան) խորապէս տարբերում է այսօր 1926-ի (յետպատերազմեան) ընկերվարութիւնը: Ան երկու շրջանների ընկերվար ուսմունքի համեմատական վերլուծութիւնն

իր հիմնական գծերի մէջ արդար պիտի դարձնէր մեր գիտողութիւնը: Այս տեսակետից չափից աւելի ուշագրաւ է յատկապէս այն յեզարընդում, որ ազարարին հարցում ապրեց մասնաւորաբար մարքսիզմը:

Վերջերս Վեննայում տեղի ունեցաւ Աւստրիական Սոցիալ-Դեմոկրատիայի տարեկան համագումարը, որ այս հարցի տեսակէտից պարզապէս պատմական դեր կատարեց: Այստեղ այս համագումարում, պաշտօնական սոցիալ-դեմոկրատիան եկաւ և տասնեակ տարիներին անդու, յամառ ու բռնուս պայքարներից յետոյ կատարեց ուղղափար մարքսիզմի պաշտօնական յուղարկաւորութիւնը՝ ծրարապէս մէկ չափազանց կարեւոր ու նշանակալից կէտում:

Պաշտօնական սոցիալ-դեմոկրատիան, Մարքսի և Էնգելի հօր ազդեցութեան տակ, ընդդիմեց արդեմաբերական ընկերվարութեան ուսմունքը և մեկուսացաւ դիւղացիական զանգուածից: «Մանր բուրժուան» դարձաւ ընկերվարութեան յարթանակը կաշկանդող այն տարրը, որին պիտի գինակցել (պայքարի մէկ որոշ շրջանին), յետագային իր դէմ պայքարելու համար:

Սոցիալ-դեմոկրատիան իր ամբողջ հասակով, իր բազմամուտ տեսարանների բովանդակ հմայքով ծառացաւ ընկերվար բանակի այն թեւի դէմ, որ դաւանում էր աշխատաւոր մարդու (և ոչ միայն բանուորի) հասարակական ուսմունքը, այս բառի տակ հասկանալով քաղաքներում բանուորի, իսկ գիւղերում՝ հողագործի (աշխատաւոր) միատեղ և համերաշխ պայքարը յանուն ընկերվար կարգերի: Զուտ տեսական պայքար չէր այս:

Այս տարբեր վերաբերումը դէպի մարդկութեան հոծ զանգուածը՝ դէպի աշխատաւոր գիւղացիութիւնը՝ չլստում էր ընկերվար բանակի ուժերը և հակադրամատիբական պայքարը դնում շեղ դիր վրայ:

Դաւանելով բացառաբար բանուոր դասակարգի ուսմունքը, սոցիալ-դեմոկրատիան շատ բնական հետեւութեամբ ձգտում էր յեզարընդ խորոց հասարակակարգը միմիան բանուորութեան ուժերով և ապահովել ապագայ ընկերվար հասարակակարգի յարթանակը՝ նորից նոր բանուորութեան պայքարի և իշխանութեան գնով:

Այս միամտն ըմբռնումը իր արտայայտութիւնը գտաւ սոցիալ-դեմոկրատական իրայայտուկ հղատակարգային պայքարի մէջ, որի շրջանակները սեղմուեցան չափազանց նեղ սահմանների մէջ և է վերջոյ յանդեցան մէկ արտաոց եզրակացութեան, ըստ որում, «դասակարգային պայքարի» մէկ բեւեռին կանգնած մնաց մարդկութեան մէկ աննշան տոկոսը՝ պրոլետարիատը, միւս բեւեռին իր դէմ ունենալով բովանդակ մարդկութիւնը:

Այս թիր ըմբռնումը խորտակելու համար ազարբ ընկերվարութեան ներկայացուցիչները մէկ ամբողջ տեսութիւն կերտեցին, հիմքից քաղելով մարքսիզմի բովանդակ կառուցուածքը: Այս պայքարն ապարդիւն չանցաւ: Պատակուում սկսուեց մինչեւ իսկ սոցիալ-դեմոկրատական բանակում և մէկ ամբողջ թիւ, սեփականիստների իշխանութեամբ, հրաժեշտ տուաւ Մարքս-Էնգելսիան ազարբ տեսութեան: Սակայն

պաշտօնական սոցիալ-դեմոկրատիան, այնուամենայնիւ շարունակեց մնալ իր հին դիրքերի վրայ եւ վարդապետել այն ուսմունքը, ինչ ժողովուրդի էր իր մեծ աւսուցիչներին:

Մարքսեան ազդար դղեակը յօսք պիտի ցնդէր մեծ պատերազմից յետոյ եւ պատերազմի ճերմած յուսաբերութիւններին պատճառով: Անա այս մեծ ու նշանակալից պարտութիւնն է, որ աւստրիական Սոցիալ-Դեմոկրատիան դալիս է արձանագրելու վիճենայի իր գերագոյն ժողովում եւ որ իր մշակած ազդար ծրագրով կոչուած է պարզապէս նոր շրջան գծելու ընկերվար շարժման պատմութեան մէջ:

Պատմենք մի քանի խօջքով:

Համազումարից զրեթի մէջ ամբողջ տարի առաջ կուսակցութիւնը ամենայն լրջութեամբ պատրաստուել է այս աշխատանքի համար: Այս նպատակով կազմուած յատուկ յանձնախումբը ուսումնասիրել է ամբողջ հարցը, սեւ է գիւղացիական կազմակերպութիւնների զբաւոյր եւ բերանացի գեկուցումները, գիտական յատուկ դասումնասիրութիւններ է կատարել այս շրջանին եւ ստեղծել է մէկ ամբողջ գրականութիւն՝ արարել խորհրդի նուիրուած: Այս նոր նիւթերի քանակը, ըստ եղած տեղեկութիւնների, կարելի է ամփոփել մի հատորների մէջ, որոնց շարքին է պատկանում նաեւ Բաուէրի մէկ նոր ու արժեքաւոր գործը՝ «Պայքարը անտառների ե՛՛ արօտատեղիների յիմարս»՝ նուիրուած առաւելապէս ալպեան գիւղացիական տնտեսութեան:

Այս մեղուաշան աշխատանքի տրդիւնքն էր անա ազդար հարցի նախագծի մշակումը յանձնաժողովի կողմից, որ բերուեց համազումար եւ շատ աննշան սրբազրութիւններով միամայնութեամբ ընդունուեց համազումարի կողմից:

Մարքսիստական դպրոցի դաւանած սկզբունքների տեսակէտից ամենից նոր, արժէքաւոր ու նշանակալից գաղափարն այն է, որ ձրապէս պաշտօն նապէս դէմ է արտայայտուում միմիայն ԴՐԱՄԱՏՐՈՒԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ եւ ոչ, ըստ հին զոգմայի, ԱՄԻՆ ՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ: Ընկերվար դաւանանքի յաղթանակի համար անհրաժեշտ էնկատուում պայքարը միայն խՈՇՈՐ ԲՈՒՐՇՈՒԱԶԻԻ դէմ եւ ոչ, ըստ հին տնտեսութեան, նաեւ «ՄԱՆՐ-ԲՈՒՐՇՈՒԱՅԻՆ»:

Միազիրը հիմնովին յեղաշրջում է այն ամբողջ գաղափարական կառուցումը, որ դաւանում էր աւստրիական Սոցիալ-Դեմոկրատիան մինչեւ վիճենայի համազումարը:

Անա ազդար հարցի նոր ձեւակերպութիւնը վիճենայի ծրագրի մէջ:

«Ընկերվարութիւնը պայքարում է տիրող դասակարգի կեղծոյղ սեփականութեան եւ ոչ թէ գիւղացիութեան աշխատաւորական սեփականութեան դէմ: Տիրող դասակարգերի շահագործող սեփականութեան բունզբաւուումը ոչ թէ սպաւնում է գիւղացիութեան աշխատաւոր սեփականութեան, այլ ամրացնում է այն»:

Այս մի քանի տողերի մէջ թաքնուած է պարտուած գաղափարների մի ամբողջ աշխարհ, որի շուրջ տասնամեակների շարունակ պայքարել են — կրքոտ, անասնաձ ու մոլեգին ձեռով — ընկերվար բա-

նակի տարբեր թիւերը: Պաշտօնական մարքսիզմը միշտ կառչած մնաց իր անկենդան զոգմային եւ շահագործում տեսու ամէն սեփականութեան մէջ — մինչեւ իսկ ամենէն աննշան եւ ամենէն «պրոլետարական» — եւ իր ամբողջ հասակով ծառայում մանր գիւղացիութեան դէմ: Աշխատաւոր մարդկութեան այս մեծ, արի եւ ստեղծագործ գանգուածը միշտ նըկատուեց իբրեւ օժանդակ բանակ (եւ այն է՛ լուսագոյն դէպքում) այն պայքարի մէջ, որ բանուոր դասակարգը, մասնատիրական տնտեսութեան յատուկ օրէնքների ուժով, վարում է ընկերվար հասարակարգի յաղթանակի համար: Սոցիալիզմը մի առանձնաշնորհեալ բարեք դարձաւ, որին ձգտելու պատիւը վերապահուեց միմիայն բանուորին: Եւ այս իմաստով հիւսուեց մի ամբողջ տեսութիւն, գերազանցօրէն «գիտական», որի դէմ առարկողն ամէն ինչ էր, բայց երեւէք — ընկերվարական:

Անա այս տեսութիւնն է, որ մերկացած «գիտական» իր բոլոր շղարշներից, փոխուած է մեր առջեւ: Մասնատիրական կենցաղին ընտնացած գիւղացու «նակակոլեկտիվիստական զանգը» այսօր վերջնային ընդունակ է նկատուում իւրացնելու ընկերվար ուսմունքը եւ արտօնուում է ձգտելու աշխատաւոր մարդկութեան երազած հասարակակարգին, առանց նախապէս պրոլետար գառնալու: Մանր գիւղացիութիւնը ուղղափառ մարքսիզմի դաւանողով այսօր նրապարակ է իջնում՝ բանուորութեան հետ միասին, նրա հետ միաժամանակ ու նրա կողքին պայքար տանելու ընդդէմ դրամատիրութեան եւ յանուն ընկերվար կարգերի:

Աւստրիական Սոցիալ-Դեմոկրատիայի բռնած ընթացքը ազդար հարցի մէջ՝ աշխատաւոր մարդկութեան առջեւ գծում է վարդապոյն օրերի լայն ու ընդարձակ հորիզոններ:

Հողին է յանձնուում այս կէտում պաշտօնական մարքսիզմը՝ մշմարիտ ընկերվարութեան վերածմնդի պայմանով:

Վ. ԱՆԱՍՍԱՐԴԵԱՆ

Ա Ձ Գ


Համաձայն նախորդ Համարի մէջ եղած աղդարութեան սոցիալիստ ամսից սկսած այլևս «Դրօշակ» չպէտք է ղրկել այն բաժանորդներին եւ գործակալներին, որոնք չեն բավակ իրենց բաժանորդագրութեան Հաշիւը առ 1-ւ Յուլիս 1926 թ. Յուլիոյ կնք, որ այս բաժանորդներն ու գործակալները բարի կլինին ամենակարգ ճամանակամիջոցում ղրկել մեզ չվճարած Համարների արժեքը:

Միաժամանակ պարոք ենք Համարում յայտարարելու, որ յաջող Համարից սկսած «Դրօշակ»-ի տիրաժը պիտի Հուսաարեցնենք վճարող բաժանորդներին ճիշտ բանակին, որից շեռոյ, բնականաբար, սպեւ կարելի պիտի դառնայ գոհացնել վճարումները ժամանակին չկատարող բաժանորդների և պրօծիակների ուշացած պահանջը:

«ԳՐՕՇԱԿ.Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ»

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## ՔՐԻՍ ՓԵՆԵՐՃԵԱՆ



չետոյ յայտնուեցաւ իբրեւ «պոմպաճի» Բրիս, ձերբակալուեցաւ իթթիհատական սահմանադրութեան առաջին օրերուն, փողոցէն անցած ատեն, քեջ յետոյ արձակուելու Համար: Երկրորդ ձերբակալութիւնը տեղի ունեցաւ 1913 Մարտի 11/24ին: Քրիսն ալ ղեպի Այաշ բըռուեցաւ իր ընկերներուն հետ, բայց Քաւրչիոյ զինակից Պուլիարիան փութաց պաշտպանել իր հպատակը, և ուղղակի փոխարեց զոնց Յիլիպէ, որ կը Պար պատերազմի ընթացքին: Ձինադպարին նորէն Պոլիս անցաւ, ուր կը գրագէր առևտուրով, ճիշտ մասնակից ազգային գործերու, մասնաւոր ժարուհամարգոտան շարժումին, ու ճիշտ պատրաստ յիշատակական խոշոր գործերու: Փոքր Ասիոյ աղէտէն յետոյ երբ խուճապը ծալ տուած էր Պոլսոյ ձեջ, ուզեց կենոյ ճիւղն վերջին վալրիւնը, ի հարկին նասակցելու Համար ինքնապաշտպանութեան գործին, այց տեղի տարով իր ընկերներու յորդրներուն, անցաւ Պուլիարիա, օտրէ 1924ին փոխադրուեցաւ Փարիզ, պարզ հիւանդութեան հետեւնորով հիւճուելու և յիջելու Համար: Քաւասնճիւրու տարեկան էր կը թողու կին ձր և երկսոյ ձր:

## ՔԵՆՕ

Փեարուար 9ին, անահիկալ գաւազրութեան ձր զոհ գնաց, Քուրիդի ձտերը ուրիշ ձարաիկ ձր, Բենիամին Գէճոյան (Քենօ):

Մարտ 10ին, Փարիզէն ձեկ ձաւ Հեռու, Փոնթեպլոյի հիւանդանոցին ձեջ ձուաւ հին ուղղիկ ձր, Քրիս Փեներճեան:

Կանուխէն ձանկրով Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը, Քրիս ունեցած է եռանդուն գործունէութիւն, ձանաւորապէս գաւազրական գործելու ձեջ, որ իր նախախրութիւնն էր Յանդուգն ի Հարամիտ, անկոնց չէր ալեւր փոանցին առջև, և իր աճէնէն զժախտ օրերուն անգամ, կը պահէր յերկափոխականի կորովը: Ինքն ալ մէկն էր այն անձներէն, որոնք պատրաստեցին Երլարիի ձահափորձը, 1905ին: Երկաւ է այս առթիւ իր կատարած ստորերկրեայ աշխատանքին պատմութիւնը, իբրև ձեկ զիակը այլ աննախընթաց յանդգնութեան, որ ամիսներով գրադեցոց Համիտի կազմած արտակարգ առեսնը եւ ձանուլը: Աճէն տեղ էր Քրիսը, զանազան անուններով, բայց ձիշտ միևնոյն՝ Ծարպիկութեամբ: «Սիրլիւ Րիչչի»

Ծնած 1882ին, Բենօ շառ կանուխէն անգամազրած է Հ. Յ. Դաշնակցութեանը: Միշտ պատանաս հետեւելու իր կուսակցութեան կոչին՝ ան ձանուկցած է 1914ի կամաւորական շարժումին, և այնքան աջքի ընկած իր եռանդով կատարով, որ 1916-17ին ուսու գիտնորական իշխանութեան կողմէ նշանակուեցաւ քաղաքապետ Հին Բալայիտի: Նահանջէն յետոյ անցաւ Երևան, զիւր ձր քաշուելով: 1921 փետր. 18ի ապստամբութեան, նորէն պատմէշին վրայ էր, իբրև գիտնորական ուժ: Հաղաքաւոր փախատուաններու հետ, ինքն ալ անցաւ Քաւրիզ, ուր տաձանիկ օրեր անցուց, փուռէն մինչև խճուղիներու շինութեան բանտը զառնալով: Նոր ձեռնարկած էր այս վերջին գործին, երբ զոհ գնաց հրէշալին զաւարտութեան:



# ԱՄԻԱՏԱԻՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## ԵՒՐՈՊԱՅԻ ԲԱՆԻՌՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՎԱՆ ՎԻՃԱԿԸ

«Դրօշակ»-ի նախորդ համարում վիճակագրական թվերով ներկայացրինք Եւրոպայի բանուրութեան քանակն ու անտեսական շրջադարձը՝ հիմնելով «Վոյսինդու» մի ուսումնասիրութեան վրայ, «Die Gessellschaft» անտառըրում: Այժմ գալիս ենք դեղու հարստացի բանուրութեան կազմակերպական վիճակը՝ օգտուելով թե՛ այդուսումնասիրութիւնից և թե՛ նոյն հեղինակի մի ուրիշ յօդածից, որ զեւ տեղւած է աստրիական Սոյիալ-Դեմոկրատիայի գիտական օրգանի — «Der Kampf» ամսագրի — սոյն տարւայ Յունւօրի համարում:

Իճազգաբար բանուրական կազմակերպութիւնները վերաբերեալ տեսիները խիստ պակասաւոր են մի լրիւ վիճակագրական պատկեր կազմելու համար: Աշխատանքի Միջազգային Գրասենեակը, որ որդեմ է Ազգերի Դաշնակցութեանը կից, նոր է սկսել այդ ուղղութեամբ քայլեր կատարել: Արհեստակցական Ինտերնատիոնալը, (Անտերզամ) որ վիճակագրական աղիւսակներին լուրջ կարեւորութիւն է տալիս, մինչև վերջին ժամանակներս սահմանափակուած էր միայն իւր հասանձիւղերի ուսումնասիրութեամբ: Իսկ որ ամենից զլիւստուն է՝ բազմաթիւ երկրներում — որանց թւում են նոյն իսկ Փրանսիան և Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգները — բանուրական կազմակերպութիւնների մասին մինչ օրս էլ բացակայում են ճշգրիտ տեղեկութիւնները, որ անհրատեւջտ են համաշխարհային մասշտաբով վիճակագրական տախտակներ կազմելու համար: Ըստ երեւոյթի զեւ բուական ժամանակ պէտք է սեւէ, մինչև որ հանրապարտադիր կանոններով բոլոր երկրներում էլ միօրինակ և միաժամանակ վիճակագրութեան ենթակիւն բանուրական կազմակերպութիւնները, որից յետոյ, բնականաբար, զերին կլինի ի մի ամփոփել բոլոր տեսիները և ընդհանուր վիճակացոյց կազմել: Մինչ այդ՝ ստիպւած ենք բաւականաւ այն ձուսաւօր թվերով, որ ընծեւնում են մեզ Փընկի և Ամտերզամի միջազգային մարմինները, լրացնելով կամ սրբագրելով նրանց տեսիները համաձայն այն տեղեկութիւնների, որոնք բղետելով տեղական վիճակագրական հաստատութիւններից՝ ստոյգ լինելու աւելի՛ մեծ շանսեր են ներկայացնում:

Մեզ հետաքրքրող թվերին անցնելուց առաջ պէտք է ասենք, որ նրանց վերաբերում են ոչ թէ բոլոր տեսակի բանուրական կազմակերպութիւններին, այլ միայն արհեստակցական միութիւններին: Բանուրական քաղաքական կուսակցութիւններն օրինակ, ինչպէս նաև սպառողական ընկերութիւնները — այս յօդածում նկատառութեան չեն գաւօր նրանց անկամները մեծ մասամբ անդամ են և արհեստակցական միութիւնների, հետեւաբար, այս հաշիւներին մէջ մացնել այդ ընկերութիւնները՝ կնշանակել կրկնակի թւերով ցոյց տալ կազմակերպւած բանուրութեան քանակը:

Արհեստակցական միութիւնները համաշխարհային մասշտաբով վերցլւած, Հինգ խմբերի են բաժանուած. ա. Արհեստակցութիւնների Միջազգային Միութիւն կամ Արհեստակցական Ինտերնատիոնալ (Անտերզամ), բ. դաւանական, գ. սեղիկալիստական, դ. կոմունիստական և ե. այլ և այլ կազմակերպութիւններ: Վերջիններքս մէջ են մտնում Իտալիայի ֆաշիստական կազմակերպութիւնները, գերմանական և անգլիական «դեղին» կոչւած միութիւնները, Ամերիկայի, Մեքսիկայի Աւտորիտարի արհեստակցական միութիւնները ևն:

Ըստ Արհեստակցական Ինտերնատիոնալի հաւաքած տեղեկութիւնների՝ այս Հինգ տեսակի կազմակերպութիւնների մէջ համախմբւած բանուրների քանակը, 1922-ին 1923-ի և 1924-ի սկզբներին հետեւեալ պատկերն էր ներկայացնում.

Կազմակերպութիւն	1922	1923	1924
1. Արհեստկ. Ինտերնալ.	22.414.826	18.574.330	16.490.121
2. Դաւանական կազմկց.	3.759.106	3.025.525	2.354.583
3. Սեղիկալիստական «	1.254.217	825.728	404.700
4. Կոմունիստական «	7.069.000	5.358.064	5.245.889
5* Այլ և այլ «	11.778.983	13.144.963	11.974.027
<b>Գումար՝</b>	<b>46.273.132</b>	<b>40.928.610</b>	<b>36.439.920</b>

Սոյի ժամանակաշրջանում միմիայն եւրոպական Գրգրների միութեանց մէջ կազմակերպւած բանուրների քանակն արտայայտւում է հետեւեալ հազարեանքներով.

Երկիր	1922	1923	1924
Ռուսաստան	6.875	4.494	4.556
Փրանսիա	12.596	11.264	9.193
Անգլիա	6.560	5.580	5.405
Իրլանդիա	—	—	139
Փրանսիա	1.047	1.396	1.496
Իտալիա	2.100	3.443	2.235
Լեհաստան	823	1.233	770
Սլոնիա	1305	582	453
Ռումանիա	170	82	78
Չեխոսլովակիա	2.000	1.505	1.505
Իւգոսլաւիա	250	76	60
Հունգարիա	343	249	192
Բելգիա	920	781	745
Հոլանդիա	664	640	545
Գրտուգալիա	100	150	50
Աւստրիա	1.128	1.128	1.117
Շվեդիա	381	325	400
Յունաստան	170	170	—
Բուլղարիա	36	54	50
Զիլիցիա	349	239	299
Ճինլանդիա	49	48	48
Դանիմարք	351	308	303
Իսլանդիա	—	—	4

Նորվեգիա	96	84	90
Լիտվանիա	—	40	—
Լատվիա	50	25	24
Էստոնիա	—	20	30
Լիտվանիա	26	13	13
Մեծնի	—	—	4
Գումար*	38389	33929	29804

Այս տարածակի մէջ նախ և առաջ աչքի է զարնուծ կազմակերպւած բանւորութեան աստիճանական նազուծը. 1922-ից մինչև 1924-ը, ընդամենը երկու տարւայ ընթացքում, նրա թիւն իջել է 38389,000-ից 29804000-ի, այսինքն պակասել է աւելի քան 25% -ով: Սակայն իրապէս չարքն այնքան մեծ չէ, ինչպէս պատկերանում է առաջին Հայեանցբրից: 1919-ից սկսած մինչև 1921-ի վերջերը եւրոպական բանւորութիւնը յետապատերազմեայ յեղափոխութիւնների ազդեցութեամբ յախուռն կիրպով ներս խուժեց արհեստակցական միութիւնների մէջ: Որ վերջիններս չպիտի կարողանային այդքան կարճ ժամանակամիջոցում ձարուել մի քանի միլիոնի Հասող անդեղեղիպին, անձալ, նորածուտ բանւորական զանգւածները — զո հասկանալի է ըստ ինքեան Վետեռաբար հասկանալի պիտի լինի նաև, որ 1921-ից սկսած քաղաքական և տնտեսական բեկակցիան նւազեցնէր կազմակերպւած բանւորութեան թիւը՝ աստիճանաբար զուրս մղելով նրա մէջից չճերան ասորբրին:

Միւս կողմից, եթէ նկատի ունենանք, որ 1913-ին Եւրոպական եւ արեւմտեւրոպական 17 կարևոր երկրներում կազմակերպւած բանւորութեան թիւը, համաձայն Արհեստակցական Ինտերնասիոնալ օւնեմիտիի, Հասարակ էր ընդամենը 16,152,000-ի՝ մենք, անկասկած մեծ յառաջդիմութիւն պէտք է համարենք, որ 1923-ի վերջին միլիոնաց Եւրոպայում կազմակերպւած բանւորութեան թիւը 29 միլիոնից անցնում է:

Մի կողմ թողնելով այս համեմատութիւնները՝ քննենք վերոլիշեալ աղիւսակի օւնեմիտիները բանւորական Հարմման վերջնական նպատակի կամ օտջիւղիցմի իրազորման Հիւսարւորութիւնների տեսակէտից:

Այստեղ ամէն մի օտջիւղիտի նախ և առաջ մտահոգութիւն պէտք է պատճառի կազմակերպւած բանւորութեան սակաւութիւնը աշխատաւորական զանգւածների համեմատութեամբ: Ընդունելով, որ ամբողջ Եւրոպայի վարձու աշխատաւորութիւնը, որ 1920—1921-ին Հասարակ էր 91—93 միլիոնի, \* 1924-ի սկզբին, նորմալ անցողութեամբ բարձրացել է 93—95 միլիոնի՝ կտանանք, որ այդ թիւին կազմակերպւած բանւորութիւնը — 29,8 միլիոն — զուրսութիւն ունեցող բանւորական կոմսիտիեանի 1/3 մասին էլ չէ հասնում:

Դրութիւնն օւնելի միլիթարական չի դառնայ, եթէ այս հաշիւներից զուրս հանենք Ռուսաստանը իբրև կրտաստիական երկիր: Այդ ղէպընձ կուսանանք, որ արեւմտեան Եւրոպայի 88—89 միլիոն վարձու աշխատաւորութիւնից արհեստակցական միութիւնների մէջ կազմակերպւած են միայն 25,248 Հազար Հոգի կամ ձօռ 28%—29%:

\* Մանօթ. \* Տես «Գրօշակ»-ի նախորդ համարում «Աշխատաւորական կեանք» բաժինը:

Պատկերն ամբողջաբնու համար տեսնենք, թէ իւրաքանչիւր երկրում վարձու աշխատաւորութեան ո՞ր տոկոսն է կազմակերպւած արհեստակցական միութիւնների մէջ: Ձեռքի տակ չունենալով վարձու աշխատաւորութեան 1924 թ-ի վիճակագրութիւնը՝ մենք համեմատութեան համար վերցնում ենք այն թիւերը, որ առաջ ենք բերել «Գրօշակ»-ի նախորդ համարում, ըստ 1920—1921-ի օւնեմիտիի: Ընթերցողի համար զմար չի լինի ձօռաւոր չափով հաշիւ առնել 1921—1924-ի ամուծը, և համապատասխան ճշտուծը կատարել սովոսային յարաբերութիւնների մէջ: Ներքին աղիւսակի առաջին և երկրորդ սիւնակներում թւերը մէջ են բերւած հազարեանկերով, իսկ երրորդ սիւնակում կոտորակները միասնների են վերածւած սովորական կարգով:

Երկիր	Վարձու աշխատարութ. 1920—1921	Կազմակերպւած 1924	%
Ռուսաստան	5-6.000	4.556	76-91
Գերմանիա	19.500	9.193	47
Անգլիա և Իրլանդ	16.250	5.544	34
Ֆրանսիա	10.000	1.496	15
Իտալիա	8.200	2.235	27
Լեհաստան	3,5-4.000	770	19-22
Սլոակիա	3,2-3.600	453	13
Ռումանիա	3-3.500	78	2-3
Չեխոսլովակիա	4.100	1 505	37
Իւզոլայիա	2.000	60	3
Հունգարիա	1.800	192	11
Բելժիկա	2.260	745	33
Հոլանդիա	1.900	545	29
Պորտուգալ	1.100	50	5
Աւստրիա	2.000	1,117	56
Նիդերլանդներ	1.300	400	31
Յունաստան	600	170	28
Բուլղարիա	580	50	9
Ջիպրիա	1.300	299	23
Ֆինլանդիա	850	48	6
Դանիա	1.020	303	30
Նորվեգիա	600	90	15
Լիտվանիա	280	40	18
Լատվիա	190	24	13
Էստոնիա	130	30	23

Ի՞նչ են ատուծ մեզ այս թիւերը: Այն որ արեւմտեան Եւրոպայում, բացի փոքրիկ Աւստրիայից, չկայ մի երկիր, որտեղ կազմակերպւած բանւորութիւնը վարձու աշխատաւորութեան կէսից պակաս չլինի: Անգամ այնպիսի արդիւնաբերական և զարգացած երկրներում, ինչպէս Գերմանիան, Անգլիան և Բելժիկան, կազմակերպւած բանւորները փոքրամասնութիւն են կազմում վարձու աշխատաւորութեան մէջ:

\* Գալով Ռուսաստանին, ուր, ինչպէս երեւում է այս ա-

դիւակից, վարձու աշխատաւորութեան 76—91 տոկոսը կազմակերպւած է արհեստակցական միութիւնների մէջ՝ մենք այդ թւին լրջօրէն վերաբերել չենք կարող նախ՝ որովհետեւ բոլշեւիկները, որոնցից առնուած են մուսաստանիս վերադարձու տեղեկութիւններ, խաղում են թւերի հետ ըստ հասնչայ. կամ ըստ կողմնակի հաշիւների Այսպէս օրինակ՝ նրանք 1921 թւին ցոյց էին տալիս, թէ իրենց կարծիք արհեստակցական միութիւնների մէջ կազմակերպւած են 8,428.400 անդամ, մինչդեռ այդ թւին մուսաստանում արդիւնաբերութիւնը հիմնովին քայքայւած էր, իսկ վարձու աշխատաւորների թիւը այնտեղ լատարճի գեպքում իսկ չէր կարող անցնել 5—6 միլիոնից: Բացի սրանից՝ ուսուսակի արհեստակցական միութիւնները չեն կարող նկատուել սովորական իմաստով բանտարական կազմակերպութիւններ, որոնք իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային շահերից մղուած, ինքնաբերաբար հանդէս են գալիս աշխատաւորութեան դատակարարային գործն առաջ ճիշտ հասնար: Նրանք, ընդհակառակը, կառավարական հրամանագրերով կենսիք կհրաժեմ և մեծ քանակութեամբ կառավարական միջոցներով պահպանող մարմիններ են, որոնց նպատակն է աշխատաւորական զանգաճները տիրող բեժմին հանդէպ հրուհուղանդութեան մէջ պահել և ոչ թէ նրանց ազատագրութեան ծախն մտածել:

Այսպիսով մէջտեղը կմայ միայն Աստրիան, ուր կազմակերպւած բանտարութիւնը քանակով գերազանցում է չկազմակերպւածներին: Բայց Աստրիան էլ այնքան փոքրիկ մի երկիր է և նրա կշիռն այնքան թիթիկ միջոցակիցն սոցիալական խնդիրներում, որ կարիք չկայ նրա վրայ չլանգ առնելու:

Սակայն մեզ հետաքրքրող խնդիր, արլինքն սոցիալիզմի իրականացման հնարաւորութիւնների տեսակետից անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ ոչ միայն կազմակերպւած բանտարութեան քանակը, այլ և որակը: Մտնանաք հարցին փոքր ինչ էլ այս տեսակետից:

Ինչ են ներկայացնում Եւրոպայի վարձու աշխատաւորութեան 1/3-ին էլ չհասնող 29,8 միլիոն բանտարները, որոնք անկամապրւած են արհեստակցական միութիւնների մէջ: Սրանց մէջ են գտնուած գերմանական Հիլը-Դունկերշտան միութիւնների նման կազմակերպութիւններ, որոնց համար բանտարութեան առօրեայ շահերի հետապնդումն անէն ինչ է, իսկ նրա դատակարարային պայքարի վերջնական նպատակը — սչինչ: Սրանց մէջ են գտնուած գերմանական միութիւններին պատկանողները որոնք, ձեռնպահ են թաքնուած կաթիլի կղերի ազդեցութեանը՝ չեն ուզում լսել ոչ դատակարարային պայքարի և ոչ էլ սոցիալիզմի: Ճախն Սրանց թւում են գտնուած գերմանական և անգլիական «ղեղին»ները, որոնք ակնյայտիօրէն լիաճառուած բուրժուազոյալին՝ գործնական պայքար են մղում բանտարական այն կազմակերպութիւնների դէմ, որոնք սոցիալիստական կարգերի հաստատման մէջ են գտնուած իրենց ջանքերի վերջին հանգրուանը Վերջապէս սրանց շարքերում են գտնուած 2 միլիոնի հասնող ֆաշիստ արհեստակցականները, որոնք այսօր թև ու թիկունք են տալիս Մատրինիին նրա բոլոր վայրագութիւններն արդարացնելով աշխատաւորական զանգաճների աչքում:

Հանցեց վերոյիշեալ 29,8 միլիոնից սոցիալիզմին թշնամի կամ նրա հանդէպ միանգամայն անտարբեր այս տարրերին, և կտեսնէք որ այդ թւին արագութեամբ կիջնի մինչև 8 միլիոնի: Հաշիւ առէք, որ այս մասցրդի մէջ գտնուող սոցիալիստները, սինդիկալիստները և կոմունիստները բանտարական շարժման վերջնական նպատակի մէջ համար լինելով հանդերձ՝ գործնական պայքարի մէջ շարունակ իրար բզբառում, իրար անդամարւծում են. վերջապէս նկատի առէք, որ սոցիալիստ, սինդիկալիստ կամ կոմունիստ յորջորջուողներին մի զգալի տոկոսը կրաւորական տարր է և անմեղին հակամետ չէ ընկերային յեղաշրջումների հետ անխուսափելիօրէն կապուած գրկուցներին ու զոհոգութիւններին ենթարկելու: Եւ այն ժամանակ միանգամայն պարզ կլինի, թէ քաղաքական գոյեղշտութեան ո՞ր աստիճանին պիտի հասն լինի մարդ, որպէսզի կարողանայ մտածել, թէ բանտարութեան այսօրւայ կազմակերպական վիճակում կարիք է տեսական յաջողութեամբ ընկերային յեղաշրջում կատարել, կամ մինչև իսկ սոցիալիստական կարգեր հաստատել...

Եւ իրօք, եթէ անգամ մի կողմ թողնենք վերջին նկատումը, — հաստացած լինելով, որ ընկերվարական տարրերի մէջ գոյութիւն ունեցող հակամարտութիւնները կարող են վերանայ, կամ կրաւորական տարրերը կարող են գործնականում — այնուամենայնիւ մենք պէտք է հաշիւ առնենք հետեւեալ փաստերը. Եւրոպայի 208,5 միլիոն գործուհականերից լաւագոյն ղէպքում 93 միլիոնը վաճառ աշխատաւորներ են: Սրանցից 29,8 միլիոնը կազմակերպւած բանտարութիւն, սրանցից էլ 8 միլիոնը ընկերվարականներ: Ուրիշ խօսքով Եւրոպայի 208,5 միլիոն գործուհականերից լաւագոյն ղէպքում 45% —ը վարձու աշխատաւորներ են, 14,3% —՝ կազմակերպւած բանտարներ և 3,8% —՝ ընկերվարական կարգերի հետապնդողներ...

Եթէ բոլշեւիկը մի իւրատեսակի «մտքաբխական» ըմբռնողութեամբ արհամարհում է հասարակական կենսիքի զարգացման բոլոր պայմաններն ու օրէնքները, որպէսզի առցիալիզմ «տեղի» մուսաստանում Թիւրքիստանում և Իւգոսլաւիանում — դա իր գործն է. «Gegen Dummheit sind selbst die Goetter machtlos» — առում են Գեթեր մանացիք: Ետուշատ մենք կարող ենք ցուել այն ժողովուրդների համար, որոնք զլինի նա վարձու է իր սոցիալիստական սփրիչութիւնը:

Սակայն գիտական սոցիալիզմի հողի վրայ կանգնած մարդիկ, որոնք ընկերվարական կարգերի իրագործումը հսկայապահական հասուն պայմաններից և մասնաւորապէս կազմակերպւած աշխատաւորական զանգաճների գիտակցական, շրջահայտաց, մեթոդիկ ջանքերից են սպասում — բնականաբար պէտք է լրջօրէն անդրադառնան այդ գոնդաճներին:

Մանթ. \* Սոցիալիստական և կոմունիստական Ինտերնաշոնալներում կազմակերպւած աշխատաւորութեան ընդհանուր թիւն է մօտ 7,4 միլիոն:

\* Յիմարութեան զէմ աստաններն էլ անգոր են»:

այսուայ հայրակերպակած վիճակը ներդառնող թւերի վրայ:

Եւ այլ թւերից, ինչպէս և նրանցով պայմանաւորուած աւարտայ փորձերից, նրանք, մեզ գրադեցնող Հարցքի տեսակետից, աւայժմ մի եզրակացութիւն կարող են հասնել. — աշխատաւորութիւնը — անգամ եթէ այս խօսքի տակ միայն վարձու բանաւորութիւնը Հասկանանք — մի խոշոր ոյժ է, որ բարեկարգատ պայմաններում կարող է ընտարական յաղթանակներ տանել, բուրժուազիային հարածներ հասցնել և մինչև իսկ որոշ ժամանակով խորտակել նրա տիրապետութիւնը. բայց իր մերկայ կազմակերպական վիճակում սոցիալիստական կարգի հաստատել — նա չի կարող: Դրա համար այլ քանակ և այլ որակ պէտք է ներկայացնեն աշխատաւորական կազմակերպութիւնները:

Ա. ԱՐԻՍԵԱՆ

### Ի Ն Տ ԵՐ Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ Ը

Ա. Ը. Ինտերնատիոնալ Գործադիր Կոմիտէն պիտի գուժարի աւաջիկայ Ապրիլ ամսի 11-ին հրթրական նիւսի. օրակարգի գլխաւօր կէտերն են բանտարական ներգաղթը, ընդհանուց զինաթափութիւնը, յետաշրջական երկրներում, մահաբարտապէս Իտալիայում, ընկերվարականների դէմ շարունակուող հալածանքները, վաշխաբոսի շամաձայնադիրը Եւրոպայում, որակ մասին են:

4\*

Անգլիական Անկախ Աշխատաւորական Կուսակցութիւնը երկու ամսից ի վեր առանձին եռանդով հրահրում է Ընկերվարական և Կոմունիստական Ինտերնատիոնալների միաձուլման խնդիրը: Օգտուելով Գործադիր Կոմիտէի աւաջիկայ քուճարման առթից՝ նա ցանկանում է այս խնդիրը մի անգամ ևս Ինտերնատիոնալի ընտելութեան նիւթ դարձնել: Երաւ աւաջարկն է, որ Ընկերվարական Ինտերնատիոնալը Կոմունիստականի / հոս մի խորհրդածրդով ունենայ միացումը զուտ բերելու համար, որպէսզի կարելի լինի Եւրոպային սպառնացող ֆաշիստական վտանգը կանխել և իմպերիալիզմի դէմ միացեալ աշխատաւորական ճակատ կազմել:

Իր աւաջարկը Անկախ Աշխատաւորական Կուսակցութիւնը հիմնաւորում է Հեթեհեալ կենտրով:

1. Անհրամբշտ է աշխատաւոր կասակարգի համեմտաւորութիւնը կապիտալիստական բեակսիտիկ դէմ:
2. Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը շտա առիթներով քաղաքացի է, որ ինքը պարտատ է համաձայն պարագաների փոփոխելու իր քաղաքականութիւնը: Իբրև օրինակ բերում է «Նեպոլ» (նոր տնտեսական քաղաքականութիւնը):
3. Տոմսիկի վերջին ճառը արհեստակցական Ինտերնատիոնալների միացման մասին յայտարարում է, որ միացման համար նպատաւոր ձեւով փոխած է բոլշեւիկների

վերաբերմունքը՝ արհեստակցական միութիւնների մերձեցման խնդրում:

4. Վերջին ժամանակներս քուսական ընկել է Արիտիվի և Ցայրահեղ դեկադրների աղեցութիւնը Ռուսաստանում:

5. Նկատելի է, որ կոմունիստական քաղաքականութիւնը որոշ փոփոխութիւններ է կրում եւրոպական մի շարք երկրներում. նա Հիմա աւելի օրւայ խնդիրների շուրջն է դառնում, քան թէ համաշխարհային յեղափոխութեան շուրջը:

6. Անգլիական կոմունիստները ներկայումս այն կարծիքն են պաշտպանում, թէ իրենց «գլխուած յեղափոխութիւն» անելով չեն հասկանում փոքրամասնութեան կողմից մուղ քաղաքացիական պարտերով, այլ մեծամասնութիւնը ներկայացնող սոցիալիստական կառավարութեան բոլորը՝ ճիշդու համար ունեւոր դատակարգ ընդդիմութիւնը:

7. Միտեղամայն անհրամբշտ է լեցնել Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև բացւած անդունը. Ռուսաստանի չեղքացումը վտանգաւոր է:

8. Անհրև է, որ Ռուսաստանի սոցիալիստները օգալն կամ քաղաքական աղատութիւնների համար կատարող որ և է քալ աւելի արդիւնաւէտ կլինի այն դէպքում, երբ բանակցութիւնների նիւթ դառնայ, քան թէ հանդէս գայ իրեն ընկաղատութիւն հակառակորդ բանակի կողմից:

9. Խորհրդածրդովն աւելի կուայ, որ Երրորդ Ինտերնատիոնալը ճշտէ իր վերաբերմունքը զինւած աղատաբութեան խնդրում: Եթէ նա յամտաի իր հիլն տեսակետների վրայ, ժողովրդավար կուսակցութիւնները լաւագոյն վիճակի մէջ կգան իրենց ամէն մի երկրում կոմունիստների դէմ պայքարելու համար:

Իբրև օրակարգի կէտեր իր ծրագրած խորհրդածրդովի համար՝ Անկախ Աշխատաւորական Կուսակցութիւնը յանձնարարում է այնտեղ ընտելութեան դիւ կոմունիստական Ինտերնատիոնալի առ կարծիքը թէ՛

ա. Միայն զինւած յեղափոխութեան կարելի է ընկերվարութիւն հաստատել բոլոր երկրներում, և, Հետեւաբար, Ինտերնատիոնալի յաղատակը պիտի լինի զինւած աղատաբութիւն կազմակերպիկ՝ միջազգային բուրժուազիան տաղալիւու համար:

բ. Ճիւստարութեան դիկատարանս կենտական միջոց է մարդկութիւնը կապիտալիստական սարտախնդրից աղաւտաղելու համար:

գ. Գարւանտակայն աշխատանքներին մասնակցելը ցանկալի է սւջ թէ այնտեղ օրգանական աշխատանքներ կատարելու, այլ բուրժուական կառավարութեան մեքենան քայքայելու և պարլամենտը ոչնչացնելու համար):

դ. Ընդհանուր քաղաքացիական աղատութիւնները և մասնաւորապէս ընկերվարական կուսակցութիւնների անկաշկանդ գործնեւութիւնը վշասակար են Ինտերնատիոնալի նպատակների տեսակետից:

Անկալով միացման բանակցութիւնները առանց որ և է պայմանի, Ա. Ը. Ինտերնատիոնալը միացման խորհրդածրդովի ժամանակ պիտի պահանջի:

1 Որ ամէն մի երկրի՝ ընկերվարական կուսակցութիւն աղատ լինի գործելու համաձայն տնտեսական, ընկերվարի և քաղաքական այն պայմանների, որոնց մէջ գտնուած է ինքը:

II Որ պարտեցին Կոմունիստական Ինտերնասիոնալի բայբայի աշխատանքները կանազան երկրների բանտարական կազմակերպութիւնների մէջ:

Այս առաջարկը Գործադիր Կոմիտէին ուղարկելուց առաջ Անկախ Աշխատատարական Կուսակցութիւնը ներկայացնում է այն Ա. Ը. Ինտերնասիոնալի անդիկական Հաստատումն ի ընտանիքին Վերջինս էր բերօրի մէջ, որին անդամ են Հնդկերսն, Կրանդ եւ Ֆէններ Բորքվէյ, դէմ է արտայայտուած այդ առաջարկին, ուստի և նա ներկայացուած է ոչ թէ Անդիկական Աշխատատարական Կուսակցութեան, այլ նրա մէ փորձիկ ծառը կազմող Անկախ Աշխատատարական Կուսակցութեան անունով:

Պէտք է անկայցնել, որ այս խնդիրը պաշտօնական ընթացք անելուց առաջ Անդիլայի ընկերվարական ծածուկի մէջ թեր և դէմ վիճարանութիւնների ներքի գործակ Վրդմից «The New Leader»-ը և «The Socialist Review», իսկ միւս կողմից «The Labour Press service» — առաջինները կողմնակից առաջարկութեան իսկ վերջինը Հակառակ աս Հանդիսանումն են ներկայացնող թեր և դէմ պատճառաբանութիւնները Վաւական Հայտաւարողի դերում է Հնդկերսնը, որ էր ընդդիմախօսութեան մէջ առանձնապէս վեր է Հանում այն նեղ խնդրը, որ կատարում էին կոմունիստները 1922 թ. Ռերլինում, երկու Ինտերնասիոնալների խորհրդարանովին, որ Հրատարած էր ձիշգ նոյն նպատակով:

ՅՈՒՆԵՍԿՈՒՆԻՄ

ՅՈՒՆԵՍԿՈՒՆԻՄ Հնալած նորահաստատ գիներական դիկատատորայի բարձր ստանդարտներին, ընկերվարական շարժումը Հնդկահայ խորացնում է իր արմատները Պրէէի ընկերները բազմադասի դուարութիւններ ՀայթաՀարիլով Հիմնել են «Տօ Վիճան տօն էրգաոտօ» («Բանւերների Ամբիոն») շարքաթերթը, որ մի անգամ կուսակցութեան կողմից փակելուց յետոյ վերակառն է իր Հրատարակութիւնը Մայրնիկ ընկերները, իրենց շուրջը Համախմբով կոմունիստական բժիշկներից Հնուացածներին՝ կազմակերպել են «Յունաստանի Աշխատարական Ընկերվարական» կուսակցութիւնը, որ առայժմ, ճիշդ է, դուրս է մնում երկու Ինտերնասիոնալներից էլ, բայց բոլոր նշանները ցոյց են տալիս, որ պէտք է յարի մեր Ինտերնասիոնալին:

Սայրնիկում կոմունիստ Պատգիկոսի բազաբայտ ընտրելը թեր ենթադրութիւնների տեղից է ուել արտասահմանում կոմունիստական շարժման ուրի մասին: Փաստն այն է, որ Պատգիկոսը, իբրև ընդդիմողի, շահել է կառավարութեան բարձր Հակաուսարողների ձայները, առանց կուսակցական խորութիւններին: Ինքը Պատգիկոսն արդէն պաշտօնապէս յայտարարել է, որ չէ պատկանում կոմունիստական կուսակցութեանը:

ԲԵԼՅԻՆՍԻՆԻ

ԲԵԼՅԻՆՍԻՆԻ Ընկերվարական Կուսակցութեան կենտրոնական կոմիտէն և արհեստակցական միութիւնների գլխաւոր վարչութիւնը պաշտօնական կոչով, 600 Հազար կազմակերպած բանտարակներ անունից, յայտարարում են իրենց երկրի

անարդա ֆաշիստներին, որ նրանց բոլոր բանութիւնները կպատասխանեն ընտնութեամբ և որ սրա Համար Հարկաւոր միջոցները մեք են քանտօմ: Արա ֆաշի զրդպատանուան այն է, որ բելիքական մաշխտանքը, որոնց Մուսուլինիի դափնիները հանգիտան Հին տալիս, Ծտարութիւններ են երևան Հանում պետական հարաւածով վերջ տալ այդ երկրի ժողովրդապետական կարգին:

ՏՆ

ՏՆԵԼ ԱՆ ԳԻՆՍԻ Ընկերվարական կուսակցութիւնը ունեցու իր Հերթական Համադարձար Փետրարի 1—6-ին Այս կուսակցութիւնը որ Ֆինլանդիայում ամենագործիչ էր պատերազմից առաջ (պարլամենտում նա մեծամասնութիւն էր կազմում) չէր կարողանում բազաբայտութեան արժեքն իր ուժը, բանի ցարական թաթը ծանրացած էր այդ երկրի վրայ: Փետրարեան Յեղափոխութիւնը Ռուսաստանում ազատագրելով Ֆինլանդիան ցարական լծից, Հնուարարութիւն ընձեռնեց ընկերվարական կուսակցութեանը ծաւալուել իր ուժն ու գործնութիւնը: Մակայն 1918 թ-ի բոլշեւիկեան շարժումը նորից բայբայց բանտարական կազմակերպութիւնները Այդ շարժման անմիջական Հետեանքը եղաւ այն, որ սկզբում Լիւդնիգրիֆը գերմանական դոքտրինով գրաւեց Ֆինլանդիան, և ապա տեղական բուրժուազիան ծանր Հարւած Հասցրեց բանտարական պառակտած կազմակերպութիւններին Այս ցարակ իրադարձութիւնների շնորհիւ ընկերվարական կուսակցութիւնը ծայր աստիճանի թուլացաւ իսկ կոմունիստները իսպառ վերացան Հրապարակից Այոնին տեղի ունեցաւ այն, ինչ անխուսափելիորէն տեղի է ունեւում ամէն տեղ, որ կոմունիստները, առանց Հաշիլ անեղու իրական ուժերի յարաբերութիւնը, լեւինեան յեղափոխութեան վորձեր են կատարում աշխատատարութեան գլխին («Տոնգարիա» Թաւարիա, Իտալիա, Բուլգարիա ևլ):

Բարեբախտաբար վերջին տարիներս յաջողել է վերականգնել բանտարութեան քաղաքական, արհեստակցական և մշակութային կազմակերպութիւնները: Վերոյիշեալ Համադարձարը բացում է 25,000 անդամով, որ թէև նախապատերազմեան թի կէսին է Հրասար, բայց մեթոդիկ աշխատանքի և աստիճանական աճման արդիւնք լինելով խիստ խոտմալից Հանգամանք է կրում:

Համադարձարի օրակարգի մէջ գլխաւոր տեղը բռնում էր բուրժուական կառավարութեանը մասնակցելու Հարցը: Երկար թեր և դէմ վիճարանութիւններից յետոյ այդ Հարցը վրձնուում է այն իմաստով, թէ ընկերվարականները, ի պահանջել Հարկին կարող են բուրժուական կուսակցութիւնների հետ կալիսին կառավարութիւն կազմել, էթէ կենտրոնական կոմիտէն և խորհրդարանի ընկերվարական Հասաւոր ձայների 2/3 մեծամասնութեամբ որոշում կայացրին Օրակարգի միւս Հարցերը վերաբերում էին կազմակերպական, Համայնական և մշակութային աշխատանքներին, որոնք տեղական ընդթ են կրում:

# ԹՂԹԱՎՅՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՅԱՆՈՒՆ ԻՆՅՐ

Ռոստով, Դեկտ. 23

Օգոստոսի 23ին լրացաւ Ռուսաստան աքսորւած մեր ընկերների ժամանակածիջոցը: Միամիտներ կայիս, որ կարծուած էին, թէ այդ օրը աքսորականներին պիտի ազատ արձակեն, մանաւանդ որ վերջերս բաւական բորեացական վերաբերմունք ցուցաբերեց դեպի վրաց աքսորականները: Բայց այդ օրն անցաւ, չորս ամիս էլ նրա վրայից, և դեռ ամէն ինչ Պուստ է նախկին վիճակում: Ազգականների զինու.Միերին պատասխանուած են, թէ Մոսկուն ոչինչ դէմ չուէի, միայն սպասուած է Հայաստանի կառավարութեան համաձայնութեանը: Երեկ ձեկ մանաւոր նամակից իմացայ, որ վերադարձի պայմանաժամը յետաձգել են և՛ս երկու տարով: Շատ Հաւանական է, որ այդպէս էլ լինի— Եսուած են՝ «Թէ խաչը մերն է, զօրութիւնը մենք գիտենք»: Հայաստանի Կոմկուսն այլ կերպ չէր էլ կարող վարել:

Ուրեմն աքսորի երեք տարիներին, երկու տասնավայից տարիներ ևս աւելացան. Հինգ տարի անհարազատ և անհիւրըկալ հորդոններով տակ... Իսկ վերջաւորութիւնը — մորից անյայտ:

Ովքեր են կարծիք բնապետութեան զոհերը և ինչի՞ համար են տանջուած: Այսօր Հիւսիսային Նահանգներում մենք ունինք ցաք ու ցրիւ եկած 60—70 աքսորականներ (այս թիւ ձեջ էի մտնուած այս տարւայ թարմ տասնեակը): Անէնքն էլ բանտերը, գիւղացիներ, մտաւորականներ, ուսանողներ, շատերը անցելուում երկու բռնակալութիւնների տապալանի պայքարին անձեկիրաբար ծառայած, իսկ մի քանիսը սուլթանական և ցարական բանտերի ու տաժանքների Հարուստ ստամով: Նրանցից 10—15 Հոգին արդէն անեղարգ մերտնային են, 50—65 տարեկան, բազմամարդ ընտանիքները Հայր և կերակրող: Բայց մեծագոյն ծառ ետանդի և աշխատանքի այն տարիքում են գտնուած, երբ յեղափոխականը անյայտ ծարաւ է զոռուած աշխատելու իր ժողովրդի համար:

Այս բոլորի հետ մէկտեղ, սեպուհ պարտականութիւն են համարուած յայտարարել, որ որ նրանք բոլորն էլ, առանց բացառութեան, պահել են եւ պահուած են իրենց՝ իսկական յեղափոխականին վայել ձեւով: Եւանց մեծ ոգեւորութեան չէ՛մ կարող վերլիչել հանդիպումներս մեր անազ ընկերների հետ: Եւտող գիտակցութիւնն ու «անմահ երիտասարդութիւնը» նրանց անբաժան ընկերն է: Դժբախտաբար, Հասկանալի պատճառներով Հարկադրուած են լուրթեամբ անցնելու մի շարք սքանչելի օրինակների վրայից: Օրինակներ՝ որոնք կրկնակի բարձրացնում են հմայքը այն յեղափոխական դպրոցի, ուր կոպիւլ և զատարակուել են նրանք... Թանուռն ինչի՞ են տանջանքի ու անարգանքի ենթարկուած այս շխտակ ու ազին յեղափոխականները. յանուն ինչի՞

սկսած Հայաստանի Ձեկայի նկուղներից մինչեւ Սոլովիւսան կղզիները լեցուն են Հայ յեղափոխականներով...

Չլիսուոր բացատրութիւնը պէտք է որոնել, ի հարկէ, նախ և առաջ այն ընթացքի ձեջ, որը բոլշեւիկները բռնած ունին հանդէպ բոլոր սոցիալիստական կուսակցութիւնների: Այսօր միապետականներն ու այլ բեակցիոն ուժերը այն հասկանալի են ենթարկուած, ինչ որ դաշնակցականները, սոց. յեղափոխականները և սոց. դեմոկրատները: Այսօր բոլշեւիկները այդ յեղափոխական տարրը դրել են «Հակայեղափոխականների» բանակում և իրենց զինակիցները դարձրել՝ հակակին միապետականներին կամ կապիտալիստներին: Սա դեռ զարմանալի չէ, նկատի ունենալով բոլշեւիկեան կեղծ սոցիալիզմն ու անշահալի Հակայեղափոխական ոգին:

Պատահուհ Հասկանալի է ուրեմն. իսկ առիթը: Առիթն էլ Քէմալ փաշայի տեսքն է:—

Երեւի ոչ օքի մաքով չէր անցնի, որ մի ազհիճի կեանքը այնքան թանկ արժէք բանաւոր-գիւղացեական իշխանութեան համար: Մէկ մարդու, որի մեռեքըը ներկուած են բիրաւոր աշխատարանների արկնով, այսինքն Հնչց տն մարդկանց արկնով, որոնց շահերի պաշտպանութեան մեղաշնորհը իրեն է վերապահում բոլշեւիկեան կուսակցութիւնը...

Բայց ի դուր են այդքան անխտուած «յեղափոխական» Ձեմալ փաշայի համար, նախ՝ Հայ ժողովրդի արդար դատաստանի դէմ բոլշեւիկները չէն որ իրաւունք ունին բողոքելու և երկրորդ եթէ Քէմալը պէտք էր Կրեմլին, որպէս դերակատար նրանց արեւելեան խաղերի համար, ապա թող լաւ լիշեն Եմվերին, որը Բազկից: Ձինովիւնի ճոցից, յանկարծ թաւա Աւղանխտանի Հակաբոլշեւիկ բանակի դուրսը Ձեմալը պէտք է Քէմալի միջոցով աշխատէր իրականացնել թիւրքերի այնքան փայփայած զանթուրանիզը, իսկ խորհրդային իշխանութեան միջոցով՝ տապալել Քէմալին ու անցնել նրա տեղը: Թող դեռ: Շնորհակալ լինի խորհրդային իշխանութիւնը, որ մէկ աւելորդ զինացանակքից ազատեց...:

Ահա այս . շարդարարի համար էր, որ մի քանի օրւայ ընթացքում բանտարկեցին 7—800 մարդ, որոնցից մի քանի տասնեակ մինչև օրս էլ կրուած են խաչը և դեռ ևս երկու տարի էլ պիտի կրեն:

Եթէ այսօր . մտերմօրէն հարցնէք բոլշեւիկներին, թէ ինչու՞ են արդարացնում նման վազրելի արարմունքը, պիտի պատասխանեն, թէ Հայաժանքները ոչ թէ անցեալ մեղքերի համար է, այլ ներկայի. իսկ ներկայի մեղքն այն է, որ Դաշնակցութիւնը դեռ ևս զործում է... Երկրումս Բայց թող ներսի հարցնել Մ. Յովհաննիսեաններին և Մ. Մելիք-Յուլետեփեաններին. այդ ի՞նչ Դաշնակցութեան մասին է խոսքը: Այն, որ բոլշեւիկները չորս տարի առաջ «պատմական դատով թաղեցին», թէ այն, որ երկու տարի առաջ լիվկիացեան համագումարում «գապափարապէս մեռցրին»... Իսկ եթէ այդ «դիակը» այդքան տարօրինակ յասկութիւն ունի միշտ կենդանի միտ ու յարութիւն առնել, ապա իմաստութիւն չէ՛ կարծել, թէ նրա ստեղծած «դաշնակցական մտայնութիւնը» կկերանայ դաշնակցականներին Հայաժանքի և աքսորի տաւապանքներին մասնելով...:

Հինգ տարիների փորձը բաւական չեղաւ հասկացնելու

այս ճարդկանց որ Դաշնակցութիւնը ուժեղ է ոչ թէ միայն իր անդամների անձնկրօնութեամբ կամ կազմակերպական այս և այն մեթոդով, այլ ուժեղ է Դաշնակցութիւնը, որովհետեւ կեանքի Հրամայական պահանջները ու կարիքներից է աւանտի իր սնունդը ուժեղ է, որովհետեւ նրա գաղափարները միտածանակ Համագրային և Համաճարդային են:

Եթէ այս գիտակցութիւնը մի անգամ տեղ բռնէր Հայաստանի վարչներին գլխում, երևի նրանք այլ միջոցների կրկնէին մեր կուսակցութեան դէմ պայքարելու Համար, քան բանտն ու քարոզը: Սակայն եթէ բանը բոլշեւիկներին մնայ՝ մենք երկար պէտք է սպասենք այդ օրուն ևին բռնապետների օրինակով, ամէն մէ կենսական պահանջ, ամէն զաղափարական զրուժ սրով ու Հրով ոչնչացնելու վարժում այս ճարդկանը նշանակ են, օրգանապէս անընդունակ ըմբռնելու զաղափարների արժէքն ու կենսունակութիւնը: Բռնութեամբ երկրպագուներ՝ նրանք միայն բռնութեան առաջ կարող են խոնարհել իրենց գլուխները...

ԱՅՈՏ

### Գ Ր Ա Վ Ո Ղ ՈՒ Տ Ա Ր Ե Ն Ե Ր

Թիֆլիս, 11-ն Յունւարի

Այս վերնագրով մէկ յօդած լույս տեսաւ մի ամիս առաջ տեղաւոյ «Ջարտա Վոստոկ» թերթի մէջ:

Երբ ժամանակաւոր կուսակցութեան կողմից Եշանակաւ յատուկ յանձնարումներ Հարցաքննութեան է ենթարկւած ցարական գաղտնի ոստիկանապետ զօրավար Գերասիմովին (որի Հետ յարաբերութեան մէջ էր յայտնի Ալէքէ) յանձնարների Հարցին, արդեօք «օխրանկան» (քաղաքական գաղտնի ոստիկանութիւն) պրովոկացիոն գործելակերպ ունեցել է, զօրավարը պատասխանում է, թէ պրովոկացիան «օխրանկայի» առանձնախտակութիւնը չէր կազմում, այլ պետական գործնէութեան ընդհանուր ձեւն էր Հանդիսանում:

«Ոսկի բառեր — աւելացնում է իր կողմից յօդածագիրը — իսկապէս ցարական ըժժիմի ողջ ձեւը Հիմնւած է եղել պրովոկացիան պաշտպանել ու տարածել թէ յեղափոխական կազմակերպութիւնների կենտրոններում, թէ՛ բանակում, թէ՛ բարձրագոյն և նոյնիսկ միջնակարգ դպրոցներում»:

Այս՝ ոսկի բառեր, բայց ոչ թէ միայն ցարական, այլ և կրեմլեան ըժժիմի Համար:

Փետրւարեան յեղափոխութիւնը բացեց «օխրանկայի» բոլոր գաղտնի դռները, յստակ կերպով երեւան բերելով ստույգիտան պրովոկացիոն վարձածելը: Սակայն 1917 թվից յետոյ չէր, որ յայտնի դարձան յեղափոխական շարժումների դէմ պայքարելու նման միջոցները. շատ վաղուց դեռևս Սուզէյկինի օրերից յայտնի էր դա՛ Յեղափոխութիւնը միայն վարպաղըր լայն բացեց ու բազմաթիւ նորանոր փոստեր ու դէժներ մէջտեղ Հանեց:

Այժմ էլ յայտնի են բոլշեւիկիան պրովոկացիայի շատ դէպքեր ու սրարքներ. սակայն ինչ իսօք, որ միայն սպառազայ յեղաշրջումը պէտք է ցուցաբերի այդ պրովոկացիայի ահաբեկութիւնը: Բայց պէտք է նկատել, որ բոլշեւիկները

օրօք մի շարք Հանգամանքներ աւելի են Հեշտացնում դիժակադերձութիւնը, քան ցարի ժամանակ: Սրանցից առաջինն այն, որ «օխրանկային» ներքաժ մի շարք ռուսախարհութիւններ, — Հրատարակւած Հէնց իրենց բոլշեւիկների կողմից — մեր ձեռքն են տալիս բազմաթիւ «մեթոդների» բանալիները և երկրորդ՝ որ շատ պրովոկատորներ, իսլիմի խայթից կամ այլ պատճառներից դրաք, գնահատելի մեր կացութիւնը են արել Ձեկայի գոնէութեան ձեռնարկ:

Յօդածագրի ամբողջ, ժանդարներին աշխատում էր յեր կազմակերպութիւնը Հասցնել ամենաժողովրդավէճակին ու ապա խտնաբերել նրա ծրագրները որպէսզի Հարաձն աւելի ուժգին լինի ու ոչնչացնող: Ձեկան ժողովրդավայելք մի քայլ էլ առաջ է գնում, նա ոչ միայն ծաղիկներում է ուխտագրում, այլ և գործարքէ, տալիս ու նոր ոչնչացնում: Ձէ՛ որ այս դէպքում էֆէկտն աւելի մեծ է դառնում: Օրինակ՝ Վրաստանի ապստամբութիւնը: Մենք երբք այն տեսակէտը չունենք, թէ Վրաստանի ապստամբութիւնը ժողովրդական շարժում չէր: Կառկածից դուրս է, որ վրաց ժողովրդի փետրւարն էր այդ, թէև Ձեկան իր պրովոկացիոն գործելակերպով անհամեմատ շուտ վիժեցրեց այդ շարժումը:

Ձեկայի ու ժողովրդների մէկ տարբերութիւնն էլ այն է, որ վերջինը աշխատում էր իր ճարդը մտնել յեղկազմակերպութիւնների մէջ ու նրա միջոցով պրովոկացիայի ենթարկել գործը. իսկ առաջինը, երբ մի տեղ գաղտնի կազմակերպութիւն չէ գտնում իր ճարդը միջոցով աշխատում է կազմակերպութիւն առաջացնել, նրան գործի դնելու ապա «Հարթել դիկտատուրայի ճանապարհը»:

Վերջապէս կայ մի տարբերութիւն էլ. Նիկոլա երկրորդը, բացի գաղտնի բաժնից, ունէր նաև լաւ կազմակերպւած ժանդարներին ու ոստիկանութիւն. իսկ խորհրդային Իշխանութեան միակ ուժը զալոսի բաժինն և Թէ Ձեկան և թէ կարծիք միլիցիան որպէս կազմակերպւած վարչութիւն, գրոշի արժէք չունենէ՛ միայն իրանց գործարքած անեքեւակայելի բարբարոսութիւններով ահաբեկելով ժողովրդի՛ «ամենակարող» են դարձնել նրա աչքում: Առանց պրովոկատորների՝ Ձեկան որպէս կազմակերպւած Հիմնարկութիւն ոչ մի արժէք չի ներկայացնում իրենից... չնայած, որ ամէն մէկ բոլշեւիկ իր Հերթին պարտաւոր է նրա գործակալի դրը կատարել:

Այս պրովոկատորական գործնէութիւնը մեր իրականութեան վրայ լուսաբանելու Համար եւ ձեռքիս տակ ունեցած բազմաթիւ փաստերից կերտեմ երեքը՝ որոնցից իւրաքանչիւրը պրովոկացիայի տարբեր տեսիլն է պատկանում:

Առաջին — Հատարակ տեսակը. — Ձէ՛մալ փաշայի դէպքը կատարողներ էր Ձեկային. նաև, որ տեսարն իր դռանն էր կատարել և ապա՝ որ մի քանի Հարիւր բանտարկիւններից ոչ մէկի բերնից չէր կազդանում խտտույթից կորդել: Ժարը կրած նա իր գաղտնի աշխատակիցներից կրկուսին բռնատարկում է, որոնք «խոստովանում են», թէ ահաբեկում են իրենք են կատարել: Դաշնակցութեան Հրահանգով՝ Դրանով Ձեկան ուղում էր «օրինական ձեռ» տալ բանաւորակայների Հանդէպ իր ունեցած զարշելի մտադրութիւններին: Սակայն նրա մեքենայութիւնը խայտառակ կերպով բաւեց և Ձեկան չհամարձակեց ոչ մէկի մազին դիպչել:

Յրկրորդ — Տիշակ տեսալը. Ձեկային շատ էր ծոտանալու, թէ արհա՜ք ... քաղաքում \* դաշնակցական կարծիքներովին գաղութին ունի, թէ ոչ, Գիտեր, որ արդեղ ապրում են ճի շարք նախկին դաշնակցական գործիչներ Ռազմազի՛ այս առիթովինը վերանայ, նա ուղարկում է ... ին, որի վաճառաւած լինելը դեռևս յայտնի չէր դարձած Սրա պարտավանութիւնը կայանում էր նրանում, որ... քաղաքում կազմակերպութիւն ստեղծելու լազար ու ճի խարդախ Կանապարհներով այդ երան յարդուում է, որից յետոյ կամիտէի ցուցակը յանձնուած է Ձեկային Անճիշտպէս բոլոր անգամները ձերբակալուած են: Շատ տանջանքների ենթարկելուց յետոյ Ձեկան խոտանուած է ազատել նրապից ճի քանիսին, եթէ երանք կգառնան իր դաղանի գործակալները... Զգիտեմ, ցարական «գաղտնի բաժնիք» նման դէպք ունի իր տարեգրութեան մէջ թէ ոչ:

Երրորդ — «բարձր» տեսալը. — Վրացական ապստամբութիւնը շատ յարճար առիթ էր, որպէսզի Ձեկան իր Հասշինները մարքեր թէ Գաշնակցութեան և թէ Հայ ժողովրդի բննատ տարբերի Հետ: Յետագայ դէպքերը խորապէս Հիասթափեցրին նրան — Հայերը չը ճանակցեցին Սակալէ Ձեկան յուսալուողներից չէ: Իր նպատակին Հասնելու Համար նա ուժեղ պէնք ունի իր ձեռքում — պրովակացիան Անճիշտ պէնք պրովոկատորներ եւ ուղարկուած զանազան զաւառներ, որոնք յայտարարուած են, թէ ընդհանուր ապստամբութիւն է սկսուած և Հայերն էլ պարտաւոր են ծանակցել Տեղանի Տեղանի ժողովուրդն աշխուժուած է: Բայց շատ էր սխալուած Ձեկան, կարծելով թէ Հայ ժողովուրդը թողնուած է ճակատագրի և կարծիք դաշնակցների քննադատութիւն... Պարծանքով պետք է վկայեն, որ Հայ կապիտալիստներն Զեկային պրովոկատորն է ծանուցուած: Անյաշտոկ են անցնում և նրա բոլոր քանքերը Գաշնակցութիւնը կապել վրացական շարժման Հետ, թէ սկիւելուց առաջ և թէ վերջանալուց յետոյ:

Միջքան էլ որ գորշէլի լինին վերելի փաստերը. բայց դեռևս ամենամեծը չէնք հրամայել ընթերցող Հասարակութեանը:

Բողջելիկան յեղաշրջման ճեղքամսին Ռուսաստանի դատարանները Հետապնդում և պատժում էին ցարական պրովոկատորներին: Գովելի գործ, ի Հարկէ, Բայց արի՛ ու տես, որ Հայաստանի կառավարութիւնը փոխանակ պատժելու, «օրինակալի» գործակալներին՝ ճառագայտեցում է նրանց նոյն պաշտօնով ի ծանալով Հայնդերձ, որ նրանք ցարական պրովոկատորներ են եղած:

Փառա կը պահանջի Ձեկան. Բող նա Խարկովի Ձեկան զանազ ժողովուրդներէն արիւրը թիրթի, և նրա մեջ արձանագրուած Հայ պրովոկատորների քանիք Համեմատի իր պրովոկատորների ցուցակի Հետ: Բայց ի՛նչ ենք ասում.

\* Հակակապի պատճաններով անունները դուրս ենք ձգում: Ոճը.

ճիթէ Հայաստանի Ձեկան այս աշխատանքին կարիք ունի մեր ասածի ճշմարտութիւնը ստուգելու Համար...

Փորձեցէք, պարոններ, շարունակեցէք մեր ստոր Հաստակութիւնները, քանի դեռ ժողովրդական ցածան նենեղիտան չէ քաշում մեզ իր դատաստանի առաջ...

ԱՅՈՏ

Գ Ր Օ Յ Ա Կ

ԲՍԿԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՅՄԱՆՆԵՐԸ

1926 ԹԻՒՆ

ՏՄԵՆԿԱՆ բաժնեգին 25 ֆրանսական ֆրանք, ՎԵՑՄՄՍԵՍՏ՝ 15 ֆր. և ԱՌԱՆՁԻՆ ԹԻՒՆ 2ֆր. 50 Հետեւեալ երկիրները Համար.

Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Թիւրքիա, պարսկական Ատրպատական և ավորջ Եւրոպան բացի Անգլիայից Հոլանդիայից և Սկանդինաւեան պետութիւններից:

ՏՄԵՆԿԱՆ բաժնեգին 2 ամերիկեան դոլար և ԱՌԱՆՁԻՆ ԹԻՒՆ 20 աննա Հետեւեալ երկիրները Համար.

Անգլիա և գաղութներ, Հոլանդիա, Ականգիաւեան պետութիւններ, Հիւսիսային և Հարաւային Ամերիկա, Պարսկաստան (բացի Ատրպատականից) Եգիպտոս, Պարտսիան, Միջագետք և Միացած բոլոր ներկրները:

ԱԳՍՈՒԿ ԲՍԿԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԵ ԸՆԴՈՒՆԵՐՈՒՄ

ՈՉ ՄԻ ԴԵՊՐՈՒՄ

Պրոշակի բաժանորդարելի կարելի է կամ Յունարի 1-ից և կամ Յուլիսի 1-ից: Միջանկեալ ամիսներից բաժանորդագրութիւն չէ ընդունում:

Խմբագրական և վարչական բոլոր գործերի Համար դիմել Հետեւեալ Հասցեով.

A. Isahakianz 71 Av. Kléber PARIS.

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Խնդրում ենք մեր աշխատակիցներին յղաւածները գրել թղթի մի երեւի վրայ և ըստ կարելոյն դիւրընթեանիկ Ասանձնապէս խնդրում ենք երկրի աշխատակիցներին և թղթակիցներին գրել մեր ուղղագրութեամբ:

«Պրոշակի» Խմբագրութիւն